

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 10-ի N 1441 - Լ որոշման

**ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԵՐԵՎԱՆ-2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ԲԱԺԻՆ I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈւՂՂՈւԹՅՈՒՆՆԵՐԸ	8
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ	8
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ	13
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ	20
ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ	23
ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱԶԱՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ... ..	25
ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	30
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՑ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	32
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	35
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ	37
ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ	40
ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ	42
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ	46
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	50
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ	57
ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	63

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	66
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	66
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ	70
ԲԱԺԻՆ II: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	73

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են դատական և իրավական բարեփոխումներ՝ առավելապես պայմանավորված լինելով 1995թ. ՀՀ սահմանադրության ընդունմամբ և Սահմանադրության հետագա փոփոխություններով: 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո իրականացվել է առաջին դատաիրավական բարեփոխումը, որի նպատակն էր գործող խորհրդային դատական համակարգը փոխարինել նորանկախ Հայաստանի ինքնուրույն դատական համակարգով, ստեղծել անկախ հանրապետության սեփական օրենսդրություն, դատական և իրավապահ մարմիններ:

2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո ընդունվել են դատական և իրավական բարեփոխումների երկու ռազմավարություններ. առաջինն ընդգրկել է 2009-2011 թվականները, երկրորդը՝ 2012-2016 թվականները (այս ծրագրի ժամկետը երկարաձգվել է մեկ տարով՝ մինչ 2017 թվականի ավարտը)¹:

Վերոնշյալ երկու ծրագրերում ընդգծվել է արդյունավետ դատական իշխանության կայացումը, անկախ և հանրության վստահությունը վայելող դատական համակարգի ձևավորումը²: Նախորդ ռազմավարության շրջանակներում իրականացվել են որոշ դրական փոփոխություններ, որոնցից կարելի է մատնանշել դատավարության ոլորտին առնչվող որոշ հիմնարար օրենսգրքերի ընդունման հանգամանքը, մասնավորապես՝ Վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 05.12.2013 թվականին), «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (ընդունվել է 07.02.2018 թվականին), Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը (ընդունվել է 09.02.2018 թվականին):

Իրականացված ծրագրերը, սակայն, չհանգեցրեցին ո՛չ համակարգային բարեփոխումների, ո՛չ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացման, ո՛չ դատարաններում և իրավապահ մարմիններում կոռուպցիոն երևույթների վերացման: Որոշ բարեփոխումներ իրականացվեցին կիսատ՝ այդպես էլ ամբողջ ծավալով չիրագործելով իրենց առջև դրված սահմանադրական խնդիրները: Մասնավորապես՝ «Դատական օրենսգիրք» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքներում առկա են կարգավորումներ, որոնք գործնականում էական խնդիրներ են առաջացնում՝ հատկապես դատավորների կարգապահական պատասխանատվության, դատավորների նշանակման ընթացակարգերի

¹ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926>,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110851>:

² Ծրագրերի վերլուծությունն առավել մանրամասն տե՛ս «Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը ՀՀ-ում դատական իշխանության անկախության հաստատման վրա», հասանելի է հետևյալ հղումով՝
<http://prwb.am/new/hy/2019/01/25/%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2/>

թափանցիկության, դատական իշխանության հանրային հաշվետվողականության ապահովման իմաստով և այլն: Այս հանգամանքն ընդգծվել է Հայաստանի վերաբերյալ մի շարք զեկույցներում: Մասնավորապես՝ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի 2015 թվականի մարտի 10-ի թիվ CommDH(2015)2 զեկույցի³ 37-րդ կետի համաձայն՝ դատական համակարգի վերաբերյալ զեկույցներում արձանագրված կոռուպցիայի զգալի մակարդակը լուրջ մտահոգության տեղիք է տալիս, մասնավորապես՝ հաշվի առնելով դրա քայքայիչ ազդեցությունն իրավունքի գերակայության նկատմամբ հանրային վստահության վրա: Զեկույցի 72-րդ կետում Հանձնակատարը նկատել է նաև, որ հասարակության որոշ մասերում պահպանվում է այն խորը կարծիքը, թե արդարադատությունն ի կատար է ածվում «չափաբաժիններով» և ընտրողաբար, և որ ըստ երևույթին ցցուն հակասություն գոյություն ունի մի կողմից իշխանությունների հետ ենթադրաբար կապված կամ նրանց ներկայացնող անձանց նկատմամբ դրսևորվող ակնհայտ մեղմ վերաբերմունքի (նույնիսկ եթե նրանք մեղադրվել են ծանր խախտումների մեջ), իսկ մյուս կողմից՝ իշխանություններին ընդդիմացողների նկատմամբ կիրառվող խիստ վերաբերմունքի և պատիժների միջև: 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան 10 դեպքերի քննության արդյունքների բացակայությունն էլ ավելի է խորացնում վերոհիշյալ կարծիքը և նպաստում է, որպեսզի հանրության շրջանում ցածր լինի դատական իշխանության նկատմամբ վստահությունը:

ԱՄՆ Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի կողմից 2018 թվական ապրիլի 20-ին հրապարակված Մարդու իրավունքների զեկույցում (2017թ.) արձանագրվել է, որ չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անկողմնակալություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում: Մի քանի փաստաբաններ պնդում են, որ Վճռաբեկ դատարանը ստորին ատյանի դատավորներին թելադրել է բոլոր նշանակալի գործերի ելքերը: Դատավորները շարունակում էին ենթարկվել քաղաքական ճնշումների գործադիր բոլոր օղակների, իրավապահ կառույցների կողմից, ինչպես նաև դատական աստիճանակարգի շրջանակում: Նրանք խոցելի էին պաշտոնանկ արվելու առումով և չունեին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, եթե գործադիր, օրենսդիր կամ վերադաս դատական պաշտոնյաները որոշեին նրանց պատժել: Ըստ իրավաբանների՝ անկախ որոշումների կայացման համար որոշ դատավորների հեռացման դեպքերը շարունակում են սթափեցնող ազդեցություն ունենալ դատական համակարգի վրա⁴: Դատական իշխանության անկախության բացակայությունը և դրա արդյունքում ՀՀ-ում առկա մարդու իրավունքների հիմնախնդիրներն են փաստվել նաև Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Հայաստանի արդարադատության համակարգի

³ 2014 թվականի հոկտեմբերի 5-9 Հայաստան կատարած այցելությունից հետո ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մույժնիեկսի կողմից կազմված զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ [https://rm.coe.int/ref/CommDH\(2015\)2](https://rm.coe.int/ref/CommDH(2015)2)

⁴ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf

անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» համատեղ ծրագրի շրջանակում կազմված զեկույցում⁵:

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները օրակարգ բերեցին իրապես անկախ, արդյունավետ, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական իշխանություն ունենալու բացարձակ առաջնահերթությունը: Այս առաջնահերթությունը ընդգծված է ՀՀ կառավարության 2019թ. ծրագրում, որի 4.1. կետի համաձայն՝ օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարության խնդիրը լուծելու առանցքային գործոնը Կառավարության քաղաքական կամքն է, իսկ արդարության զգացման և օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությունն ապահովելու կարևորագույն նախապայմանն անկախ, արհեստավարժներով հագեցած և արդյունավետ դատական համակարգն է: Անկախ և արդյունավետ դատարան ունենալու հրամայականը վերահաստատվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի Ստրասբուրգում կայացած հանդիպման և դրանից հետո Հայաստան ժամանած ԵԽ բարձրաստիճան պատվիրակության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում⁶: Ընդգծվել է օրենսդրական բարեփոխումների բոլոր գործընթացները Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ, միջազգային լավագույն փորձի հիման վրա և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան իրականացնելու պատրաստակամությունը:

Դատական համակարգի՝ վերոնշյալ և բազմաթիվ այլ խնդիրներին արձագանքելու նպատակով՝ անհրաժեշտ է խնդիրները համապարփակ կերպով վեր հանել և դրանց հիման վրա մշակել դատական և իրավական բարեփոխումների ծրագիր, որը կներառի կարճաժամկետ ու հրատապ, ինչպես նաև երկարաժամկետ խնդիրներ և դրանցից բխող միջոցառումներ, ինչին և ուղղված է սույն ռազմավարությունը:

Սույն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի վերջնանպատակն է լինելու դատարանների և արդարադատության համակարգին առնչվող պետական ինստիտուտների վերակառուցումը անկախության և հաշվետվողականության չափանիշներով, ինչն անհրաժեշտ է ժողովրդավարական պետության զարգացման համար: Դատական համակարգը պետք է լիարժեք անկախանա, որպեսզի կարողանա դառնալ հավասարակշռող ուժ իշխանության մյուս ճյուղերին:

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է՝ հաշվի առնելով դատաիրավական ոլորտում արմատական փոփոխությունների հրամայականը, ռազմավարական բարեփոխումների պլանավորման, մշտադիտարկման, հաշվետվողականության և առաջընթացի պարբերական գնահատման անհրաժեշտությունը:

⁵ Չեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.coe.int/en/web/cdcj/-/analysis-of-the-results-of-court-users-satisfaction-survey-of-all-courts-of-all-instances-of-armenia>

⁶ Նյութը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/04/11/Nikol-Pashinyan-Press-Conference/> :

Ռազմավարությունում նախատեսված են արմատական փոփոխություններ՝ հատկապես դատական համակարգի արդյունավետության, անկախության և դատական իշխանությունում կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառներում:

Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել ՀՀ դատական իշխանության և իրավական համակարգի առկա խնդիրները, միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության դիտողությունները և առաջարկությունները, դատաիրավական բարեփոխումների միջազգային առաջադեմ փորձը, որոնց հիման վրա սահմանվել են Ռազմավարության ընդհանուր նպատակը, դրանից բխող առանձին ռազմավարական նպատակները և դրանց համապատասխան ռազմավարական ուղղությունները: Ռազմավարության հիման վրա կազմվել են երեք գործողությունների ծրագրեր՝ կարճաժամկետ (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2020 թվական), երկարաժամկետ (2021 թվականից մինչև 2023 թվականը) և էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման վերաբերյալ առանձին գործողությունների ծրագիր (2019 թվականի 2-րդ կիսամյակից մինչև 2023 թվականը):

Գործողությունների ծրագրերով սահմանվում են ռազմավարական նպատակներից և ուղղություններից բխող որոշակի գործողություններ՝ դրանց կատարման համար պատասխանատու մարմնի, ելակետային իրավիճակի, կատարման վերջնաժամկետի, ստուգման միջոցի, ակնկալվող արդյունքների և յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ակնկալվող աղբյուրի նախատեսմամբ:

Հիմնվելով մշտադիտարկման և գնահատման արդյունքների վրա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Գործողությունների ծրագրերը կարող են փոփոխության ենթարկվել՝ ճշգրտվել և վերանայվել տարեկան կտրվածքով:

Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի ֆինանսական կայունությունն ապահովվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հասանելի միջոցների շրջանակում ռազմավարական նպատակներից բխող գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման միջոցով: Գործողությունների արդյունավետ իրականացման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումներին մշտապես աջակցող գործընկերների, այդ թվում՝ միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական և տեխնիկական աջակցությունը:

Ռազմավարությամբ ոլորտի բարեփոխումները նախատեսվում է իրականացնել օրենսդրության և կարգավորիչ դաշտի ստեղծման կամ կատարելագործման, գործնականում դրանց կիրառումն ապահովող արդյունավետ մեխանիզմների ներդրման կամ զարգացման միջոցով:

Ռազմավարությամբ ամրագրված են հետևյալ ռազմավարական նպատակները՝ էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում, անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության

ամրապնդում, սահմանադրական բարեփոխումների անցկացում, ընտրական օրենսդրության բարեփոխում, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում, կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ստեղծում, , իրավապահ համակարգի բարեփոխում, քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում, վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում, սնանկության ոլորտի բարեփոխումներ, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում, նոտարական համակարգի արդյունավետության բարձրացում, փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում, հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ:

Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել՝ Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների գործողությունների ծրագիրը, միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից ՀՀ արդարադատության ոլորտի գնահատման զեկույցները (Եվրոպական Միության Արդարադատության մոնիթորինգի ծրագիր, ԹԱՅԵՔՍ գործիքի շրջանակում արդարադատության ոլորտի գնահատման ծրագիր, Եվրոպայի Խորհրդի՝ Դատարաններից օգտվողների բավարարվածության հարցումներ և այլն), ՀՀ դատական դեպարտամենտից ստացված վիճակագրական տվյալները, դատավորներից, փաստաբաններից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից ստացված՝ ոլորտի խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև այլ վերաբերելի զեկույցներ, ուսումնասիրություններ և այլ նյութեր:

ԲԱԺԻՆ I. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈւՂՂՈւԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

*Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի ստեղծում և տվյալների
Էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում և արդիականացում*

Վերջին տարիներին ակտիվորեն քայլեր են ձեռնարկվել հանրային կառավարման տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման ուղղությամբ: Մասնավորապես,

Նորմատիվ իրավական ակտի նախագծերի իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, այդ գործընթացի թափանցիկության և

հաշվետվողականության ապահովման նպատակով 2016 թվականին ստեղծվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք (www.e-draft.am): Բացի այդ, պետական կառավարման համակարգի թափանցիկության ապահովման, վարչարարության պարզեցման նպատակով ներդրվել են կամ ներդրման փուլում են էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) մի շարք առանձին գործիքներ (օրինակ՝ e-request.am, e-hotline.am, e-license.am և այլն): Այնուամենայնիվ, դեռևս շատ անելիքներ կան հանրային կառավարման էլեկտրոնային գործիքների բարելավման, նոր գործիքների ներդրման և դրանց միջոցով վարչարարության պարզեցման և ժամանակի խնայողության ուղղությամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էլեկտրոնային	արդարադատության	համակարգի	ներդնում
Թվային դարաշրջանում առկա էլեկտրոնային համակարգերը արդարադատության ոլորտի համար առաջացնում են նոր մարտահրավերներ և հնարավորություններ: Ներկայումս արդարադատության ոլորտի մի շարք մարմիններ ունեն արդեն իսկ ներդրած էլեկտրոնային համակարգեր, սակայն այդ համակարգերը փոխգործելի չեն արդարադատության ոլորտի այլ մարմինների էլեկտրոնային համակարգերի հետ: Ներկայումս անհրաժեշտ է ներդնել կենտրոնացված էլեկտրոնային կառավարման համակարգ արդարադատության ոլորտի խնդիրների համապարփակ լուծման նպատակով:			

Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրման նպատակն է՝

ա) միավորել արդարադատության մարմիններում գործող բոլոր էլեկտրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները,

բ) արդիականացնել դատարաններում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը դրանց հիման վրա դատարաններում ներդնել և գործարկել դատական միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, որը կապահովի գործերի մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան և միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև փոխանցումը, ինչպես նաև կողմ-կողմ, կողմ-դատարան ծանուցման արդյունավետ համակարգի գործարկումը, հնարավոր է դատարան ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություններ կատարելը,

գ) ստեղծել իրավապահ (հետաքննության և նախաքննության մարմիններ, դատախազություն), դատական և իրավակիրառ մարմինների (Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, Քրեակատարողական ծառայություն, Պրոբացիայի ծառայություն) միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ,

դ) ներդրել պաշտոնական առցանց նամակագրության համակարգ, համակարգի միջոցով ապահովելով էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հնարավորություն ստեղծել առցանց կապ հաստատել, դիմում, բողոք և այլ փաստաթղթեր ներկայացնել պետական մարմիններին, բացի այդ, ընձեռել գործի ընթացքին առցանց հետևելու հնարավորություն,

ե) ապահովել համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը վարույթի ողջ ընթացքում,

զ) ապահովել թվային արխիվների ստեղծումը:

Վերոնշյալ գործընթացների իրականացման արդյունքում էլեկտրոնային միասնական համակարգը կապահովի էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառության իրականացումը, կնպաստի արդարադատության ոլորտի մարմիններում գործող համակարգերի վարման միասնական քաղաքականության մշակմանը, վիճակագրական համապարփակ տվյալների հավաքագրմանը, ժամանակի, նյութական ռեսուրսների խնայողությանը և վարչարարության պարզեցմանը:

ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի արդիականացում

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (azdarar.am) կայքը (այսուհետ՝ Կայք) ստեղծվել է 2007 թվականին, որից հետո 2009 թվականին ծրագրում կատարվել են որոշակի փոփոխություններ: Կայքը գործարկվել է 2011 թվականին:

2011 թվականից մինչև 2015 թվականների ընթացքում Կայքում մուտքագրվում էր օրական միջինում 150 հատ հայտարարություն, այժմ օրական մուտքագրվող հայտարարությունների միջին քանակը հասնում է 800-ի, որոշակի օրերի հայտարարությունների թիվը հասնում է մինչև 1200-ի, արդյունքում կտրուկ ավելացել է Կայքի ծանրաբեռնվածությունը, որն էլ հանգեցրել է Կայքի աշխատանքի դանդաղեցման:

Հանդիսանալով հրապարակային ծանուցումների հարթակ՝ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, հրապարակային ծանուցումը տեղադրվում է Կայքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կայքի տեխնիկական հնարավորությունները չեն համապատասխանում արդի պահանջներին, անհրաժեշտ է արդիականացնել այն նոր ծրագրային լուծումներով և ապահովել հայտարարությունների և ծանուցումների հրապարակումը մեկ միասնական գործուն մեխանիզմի միջոցով:

Կատարելագործել դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգը

Գործող կարգի պայմաններում գործերի բաշխման կարգը հաշվի չի առնում դատավորի ծանրաբեռնվածությունը և գործի բարդությունը, ինչը հանգեցնում է որոշ դատավորների անհամաչափորեն ավելի շատ ծանրաբեռնվածության: Բացի այդ, օպերատիվ-հետախուզական գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում նշանակվում են կոնկրետ դատավորներ, որոնք բացառիկ լիազորություն ունեն նշված գործառույթն իրականացնելու, ինչի հետևանքով խախտվում է գործերի պատահական բաշխման տրամաբանությունը և նպատակը: Ներկայումս արդիական խնդիր է գործերի բաշխումը ըստ ոլորտային մասնագիտացման՝

հատկապես քաղաքացիաիրավական մասնագիտացման դատավորների միջև: Այժմ գործող ընդհանուր բաշխման մոդելը չի ապահովում գործերի արդյունավետ քննություն: Ուստի հիմնարար բարեփոխման կարիք ունեն դատական գործերի էլեկտրոնային մակագրության և գործերի բաշխման կարգը:

Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համակարգը հնարավորություն է տալիս կատարել իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պետական գրանցում/հաշվառում, փոփոխությունների պետական գրանցում/հաշվառում, լուծարման պետական գրանցում և հաշվառումից հանում:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բազայում պահվում են տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր իրավաբանական անձանց անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների մասին:

Համակարգի ծրագրային ապահովումը ստեղծվել է 2011 թվականին և դրանից հետո չի թարմացվել: Համակարգն ուղղված է «մեկ պատուհան» սկզբունքի իրագործմանը, սակայն համակարգի միջոցով ներկայումս հնարավորություն չէ իրականացնել մի շարք գործառնություններ, որոնք արդյունավետ են ժամանակի խնայողության, վարչարարության նվազեցման, գործարար միջավայրի բարելավման և մատուցվող ծառայությունների բարելավման ուղղություններում, մասնավորապես՝

- օրենքով սահմանված կարգով գործակալության կողմից իրականացվող գործառնությունների հետ կապված փաստաթղթերը, ներառյալ՝ գրանցամատյանից տրամադրվող քաղվածքները, պետական գրանցման և պետական հաշվառման մերժման մասին որոշումները և այլ փաստաթղթեր կազմվում են էլեկտրոնային փաստաթղթերի ձևով,

- համակարգը հնարավորություն չի տալիս իրականացնել լրատվամիջոցների հաշվառումը, այլ մարմնի կողմից գրանցված/հաշվառված կազմակերպությունների «վերագրանցումը».

- փակ բաժնետիրական ընկերությունների գրանցումը.
- հասարակական կազմակերպությունների գրանցումը.
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի գրանցումը.
- բաժնետերերի գրանցումը:

Ոլորտի բարեփոխումների ծրագիրն ընդգրկում է վերը ներկայացված խնդիրների լուծում, ինչպես նաև ռեգիստրի ծրագրային ապահովման արդիականացում և ռեգիստրի տվյալների հանրային հասանելիության ապահովում:

Թվային արխիվների ստեղծում

2018 թվականի դրությամբ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունում պահպանվում են ընդհանուր առմամբ անհատ ձեռնարկատերերի 93200 ընթացիկ «թղթային արխիվային գործեր» և 91958 գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատերերի «թղթային արխիվային գործեր», 76870 իրավաբանական անձանց «թղթային արխիվային գործեր» և 16322 լուծարված իրավաբանական անձանց «թղթային արխիվային գործեր», որոնք իրենց մեջ պարունակում են մոտավոր 10 մլն թերթ: Մինչ օրս նշված փաստաթղթերն ամբողջությամբ թվայնացված չեն (թվայնացված են միայն գործող իրավաբանական անձանց վերջին կանոնադրությունները):

Պետական գրանցման և հաշվառման գործընթացն ամբողջովին էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել վերը նշված փաստաթղթերի թվայնացման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ապահովել դրանց մատչելիությունը և երկարաժամկետ պահպանությունը:

Նախատեսվում է, որ արխիվային փաստաթղթերի սկանավորման, թվայնացված տվյալների շտեմարանների, հաշվառման և վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթացում կներգրավվեն նաև սահմանափակ կարողություններով անձինք:

Նոտարի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով գործարք վավերացնելու և փաստաթղթերի փոխանակման (փոխանցման) պայմանների ապահովում

Օրենսդրական փոփոխությունների իրականացմամբ պետք է ապահովել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով նոտարի կողմից գործարքների վավերացման հնարավորությունը: Եթե գործարքը ունի միայն մեկ կողմ, նոտարի կողմից գործարքը կարող է վավերացվել էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով, եթե այդ միջոցները թույլատրում են ուղղակի տեսողական շփում գործարքի կողմի և նոտարի միջև, իսկ գործարքի կողմը հայտնի է նոտարին կամ նրա նույնականացումը և ինքնությունը ստուգելը հնարավոր է սահմանված կարգով: Նշված իրավիճակում ֆիզիկական անձի նույնությունը, ինքնությունը և գործունակությունը որոշվում է անձը հաստատող փաստաթղթերով և վավերական էլեկտրոնային ստորագրության առկայությամբ:

Համապատասխան կարգավորումների դեպքում հնարավոր է ապահովել վավերացված փաստաթղթերի էլեկտրոնայնացումը և վավերացումը նոտարի կողմից: Այս գործիքը արդյունավետ կկիրառվի հատկապես տարածության վրա փաստաթղթերի կիրառությունը ապահովելու համար:

Նշված եղանակով գործարքների վավերացում և փաստաթղթերի փոխանակումը հնարավոր կլինի իրականացնել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա այլ պետությունների և Հայաստանի Հանրապետության նոտարների միջև:

Էլեկտրոնային եղանակով նոտարի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքված պայմանագրերի վավերացման համար պայմանների ապահովում

Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով էլեկտրոնային կապ ստեղծել նոտարների, բանկային և վարկային կազմակերպությունների միջև: Նման կառուցակարգերի ներդրումը հնարավորություն կստեղծի էլեկտրոնային եղանակով վավերացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքված պայմանագրերը: Կասկածանքներ էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի տիպային ձևերը և դրանց էլեկտրոնային վավերացման կարգը:

Այսպիսի կարգավորումների արդյունքում կընդլայնվի կատարողական մակագրության թերթի տրամադրման ինստիտուտը, որը կնպաստի նոտարական գործողությունների ճիշտ և արագ կատարմանը և քաղաքացիների սպասարկման որակի բարձրացմանը:

Էլեկտրոնային սնանկության համակարգի ներդրում

Էլեկտրոնային արդարադատության շրջանակներում անհրաժեշտ է ներդնել էլեկտրոնային սնանկության համակարգ, որը ընդունված է և կիրառվում է մի շարք երկրներում՝ իր տարբեր դրսևորումներով: Այն հնարավորություն է տալիս սնանկության վարույթի իրականացումը՝ սկսած դրա հարուցումից մինչև վարույթի ավարտը, իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության, մարդու միջամտությունը հնարավորինս բացառելով և գործընթացներն իրականացնելով առանց կողմերի անմիջական մասնակցության:

Էլեկտրոնային սնանկության հարթակի ներդրումը և գործարկումը պետք է նպաստի սնանկության առավել թափանցիկ համակարգի կայացմանը: Այն պետք է հնարավորություն ընձեռի ապահովել դիմումների և այլ փաստաթղթերի ներկայացումը դատարանին, սնանկության կառավարչին և վարույթի մասնակիցներին, փաստաթղթերի և սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության առցանց հասանելիությունը, իրականացնել էլեկտրոնային ծանուցումներ, կազմակերպել սնանկության կառավարիչների ընտրությունը, գույքի էլեկտրոնային վաճառքը, հրապարակել հաշվետվություններ, ամփոփել վիճակագրական տվյալներ և այլն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման անհրաժեշտության հիմնավորումը⁷

⁷ Ներպետական մակարդակում անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունը քննարկվել է 2019 թվականի մայիսի 24-ին ԱԺ-ում տեղի ունեցած՝ «Անցումային

Անցումային արդարադատությունը գործընթացների և կառուցակարգերի ամբողջություն է, որոնք կապված են նախկինում տեղի ունեցած լայնամասշտաբ չարաշահումների ձևով ժառանգությունը որպես իրողություն ընդունելու՝ հասարակության փորձի հետ, նպատակ ունեն ապահովել հաշվետվողականությունը, ծառայել արդարությանը և հանգեցնել հաշտության:

1991 թվականի սեպտեմբերից 2018 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային խախտումներ՝ զուգակցված երկրում համակարգային և քաղաքական կոռուպցիայի երևույթների կայուն առկայությամբ: Այս հանգամանքն ընդգծվել է մի շարք միջազգային զեկույցներում:⁸

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները հետևանք էր այս երևույթների արդյունքում հասարակության մեջ կուտակված անարդարության զգացման, և ժողովրդի մի ստվար զանգված, այլևս այլ ելք չտեսնելով, բողոքի իր ձայնը բարձրացրեց, որպեսզի հետագայում ունենա այնպիսի Հայաստան, որտեղ մարդու իրավունքները և ազատությունները հիմնարար արժեք են, մարդը իրեն պաշտպանված, ամուր և ուժեղ է զգում: Այս պայմաններում կա երկու ճանապարհ. մոռանալ անցյալը և շարժվել առաջ կամ վերլուծել անցյալը, հավաքել տեղեկություններ իրավունքների խախտման վերաբերյալ, առավելագույնս փորձել վերականգնել տուժողների իրավունքները, գնահատական տալ անցյալին և կատարել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որպեսզի բացառվի հետագայում որևէ իրավիճակում նման երևույթների կրկնությունը:

Որպես իրապես ազատ և արդար գնահատված՝ ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններից հետո⁹ Հայաստանում առկա իրավիճակը ցույց տվեց, որ 2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո Հայաստանը նորից գտնվում է անցումային շրջանում, սակայն եթե ԽՍՀՄ փլուզումից հետո երկիրը գտնվում էր տոտալիտար վարչակարգից ժողովրդավարական վարչակարգի անցման

արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» խորհրդարանական լսումների ընթացքում, որի շրջանակներում ներկայացվել է նաև Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից պատրաստված «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցը:

⁸ Տե՛ս, օրինակ, Universal Periodic Review – Armenia (<https://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMIndex.aspx>), Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009) – OSCE/ODHIR (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/hy/odihr/75779>), Resolution 1609 (2008) The functioning of democratic institutions in Armenia (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17643&lang=en>), The Human Freedom Index (<https://www.cato.org/human-freedom-index-new>), Freedom in the World 2018 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2018>), Control of Corruption Indicator – Millennium Challenge Corporation (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.mcc.gov/who-we-fund/scorecards?fwf_scorecard_country=6170):

⁹ ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցը տե՛ս հետևյալ հղումով՝ <https://transparency.am/files/publications/1554816519-0-788440.pdf>:

փուլում, ապա այս փուլում կանգնած է իմիտացիոն կամ «կեղծ» ժողովրդավարական վարչակարգից իրական ժողովրդավարության անցնելու շեմին:

Հայաստանի Հանրապետությունը հաստատական է կիրառել անցումային արդարադատության որոշ գործիքներ, որոնք ուղղված են իրավապահ և արդարադատության համակարգերի գործունեության ընթացքում դրանց սահմանադրական նպատակների տևական խեղաթյուրման հետևանքների վերացմանը և քաղաքացիական համերաշխության վերականգնմանը՝ միաժամանակ ապահովելով այդ գործիքների կիրառման համապատասխանությունն ու համարժեքությունը իրավունքի գերակայության և դատաիրավական համակարգի անկախության սկզբունքներին:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման ղեկավար սկզբունքը լինելու է համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և օրենքներին:

Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառումը

Հայաստանի Հանրապետությունում անցումային արդարադատության գործիքակազմը իրագործվելու է հետևյալ շրջանակներում՝

- հավաքել մարդու իրավունքների զանգվածային, պարբերական խախտումների (այսուհետ նաև՝ խախտումներ) վերաբերյալ փաստեր առնվազն հետևյալ ոլորտներում՝ ա) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրական գործընթացներ, բ) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր հետընտրական գործընթացում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ, գ) Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարումներ, դ) սեփականազրկումների այլ դրսևորումներ, ե) ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ,

- դիտարկել խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը,
- հանցագործությունների վերաբերյալ նոր տեղեկությունների ի հայտ գալու դեպքում այդ տեղեկությունների տրամադրում իրավապահ մարմիններին,

- ինստիտուցիոնալ բարեփոխումների, այդ թվում՝ մշտադիտարկման այնպիսի համակարգերի ներդրում, որոնց կիրառումը թույլ կտա վեր հանել հնարավոր խախտումները և կբացառի անցյալի սխալների կրկնությունը,

ստացված տեղեկությունների ամփոփում զեկույցի մեջ, դրա հրապարակում և գնահատական անցյալին:Ընդ որում, խախտումներին անդրադարձ կատարելու համար դրանց վերաբերյալ դատական ակտի առկայությունը չպետք է լինի պարտադիր:

Վերը նշված՝ խախտումների ոլորտների ընտրությունը պայմանավորված է այդ խախտումների բնույթով, մասշտաբներով և առաջացրած հետևանքներով: Մասնավորապես, տարիներ շարունակ ընտրական և հետընտրական գործընթացների ընթացքում մարդու իրավունքների զանգվածային խախտումների առկայության մասին ընդգծվել է Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից 2014 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին ներկայացրած

զեկույցում¹⁰: Նշված զեկույցի մեջ արձանագրված է, որ Հայաստանի «պետական կառավարման համակարգի առավել խնդրահարույց ինստիտուտներից են ընտրությունները: Ընտրելու և ընտրվելու իրավունքն ինքնին առավել հաճախ խախտվող իրավունքներից է: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ընդգծել են, որ Հայաստանում տեղի ուեցած ընտրությունները նպաստել են քաղաքացիական հասարակության կողմից վերջին 15 տարիներին դիտարկված և արձանագրված կոռումպացված գործելաոճի այնպիսի դրսևորումների ամրապնդմանը, ինչպիսիք են ընտրակաշառքը, ընտրողների, դիտորդների և վստահված անձանց նկատմամբ ճնշումները և ահաբեկումը, բազմակի և «կարուսելային» քվեարկությունը, ընտրատեղամասերում հանցագործների կողմից իրականացվող վերահսկողությունը և քվեատուփերի լցոնումը»:¹¹

Նախընտրական և հետընտրական գործընթացներում քաղաքական նպատակներով հետապնդումների մասին ևս առկա են միջազգային և ներպետական կազմակերպությունների կողմից արձանագրված խնդիրներ: Մասնավորապես, իր 2008 թվականի 1609 հանձնարարականում ԵԽԽՎ-ը կոչ է արել Հայաստանին բաց թողնել քաղաքական շարժառիթներով կալանավորված անձանց:¹² Քաղաքական հետապնդումներն ընդգրկել են քաղաքական գործիչների, նրանց հետ փոխկապակցված անձանց, ակտիվիստների և այլն:¹³

Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի կողմից ներկայացված տվյալների համաձայն 1994-2019 թվականների ընթացքում ՀՀ Ձինված Ուժերում և Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության Բանակում խաղաղ պայմաններում ընդհանուր առմամբ գրանցվել է 1121 մահ¹⁴: Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տարիներ շարունակ պարբերական զեկույցներով ու վերլուծություններով հանդես են եկել «Խաղաղության երկխոսություն»¹⁵ և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»¹⁶ հասարակական կազմակերպությունները: Նշված կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքի մասին նշվել է նաև Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի մարդու իրավունքների 2018 թվականի զեկույցում:¹⁷

¹⁰ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին Հայաստանի Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի համատեղ ներկայացրած զեկույցը http://www.un.am/up/file/UPR%20report%20from%20OSI_FFHR_Volume%20I_arm.pdf

¹¹Տե՛ս նույն տեղում:

¹²<http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17643&lang=en>,

¹³<https://www.osce.org/odihr/34352?download=true>

¹⁴<https://safesoldiers.am/category/վերլուծական/զեկույցներ-և-հրապարակումներ>

¹⁵«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://peacedialogue.am/>

¹⁶«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության զեկույցները հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://hcav.am/>

¹⁷https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf: Ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերից մեկով 2016թ. Նոյեմբերին ՄԻԵԴ-ը որոշում է կայացրել, որ 2002թ. շարքային Սուրեն Մուրադյանի (ծառայում էր Լեռնային Ղարաբաղի տարածքում) մահվան հարցում պետությունը խախտել է կյանքի իրավունքը և սահմանեց, որ պետությունը Մուրադյանի ընտանիքին

Սեփականության իրավունքի խախտումների առնչությամբ կարևոր է հիշատակել ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն և դրան նախորդող 16.07.01 թիվ 645 և հարակից որոշումների հետևանքով (Հյուսիսային պողոտայի և Կենտրոն թաղամասի կառուցապատման վերաբերյալ) ՄԻԵԴ-ի կայացրած 11 վճիռները Հայաստանի դեմ՝ շուրջ 2 մլն. եվրո արժողությամբ վնասների հատուցմամբ:¹⁸ Նշված ծրագրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից միայն 2004 թվականին ստացվել է 176, իսկ 2005 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում՝ 239 բողոք:¹⁹

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստահավաք հանձնաժողովի ստեղծում

1991-2018 թվականների ընթացքում Հայաստանում տեղի ունեցած Խախտումների դեպքերի ուսումնասիրության և դրանց վերաբերյալ տեղեկությունների հավաքման համար անհրաժեշտ է ձևավորել Փաստահավաք հանձնաժողով: Փաստահավաք հանձնաժողովը չունի իրավապահ կամ դատական մարմինն բնորոշ գործառույթներ:

Փաստահավաք հանձնաժողովը հանդես է գալու որպես անկախ, ինքնավար մարմին: Փաստահավաք հանձնաժողովի գործառույթները, ի թիվս այլնի, ներառելու են Խախտումներից տուժած անձանց կողմից ներկայացված տեղեկությունների փաստաթղթավորումը, Խախտումներից տուժած անձանց համաձայնությամբ նրանց պատմությունները հանրայնացնելը, պետական մարմիններից տեղեկություններ պահանջելը, բացատրություններ տալու նպատակով անձանց հրավիրելը, ինչպես նաև դատական և իրավապահ մարմինների գործունեության ուսումնասիրության մեթոդաբանության մշակումը և այդ գործունեությանը գնահատական տալը՝ անդրադառնալով նաև դրանց հիման վրա կոռուպցիոն սխեմաների բացահայտմանը (օրինակ՝ վճարեկ բողոքների վարույթ ընդունման չափանիշների իրավաչափ կիրառությանը, կոնկրետ փաստաբանների անբացատրելի հաջողություններին, դատավոր-դատախազ-փաստաբան անձնական կապերի ազդեցությանը գործերի վրա և

վճարելու է 50.000 եվրոհատուցում: Թեպետ կառավարությունն այդ գումարը վճարեց, սակայն միջոցներ չձեռնարկվեցին Մուրադյանի մահվան մեջ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ (https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2018_arm.pdf):

¹⁸ Տե՛ս ի թիվս այլնի Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի, (գանգատ թիվ 27651/05), Թունյանը և այլք ընդդեմ Հայաստանի, (գանգատ թիվ 22812/05), Դանիելյանը և այլք ընդդեմ Հայաստանի, (գանգատ թիվ 25825/05), Ղասաբյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 23566/05), Բաղդասարյանը և Զարիկյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 43242/05), Վարդանյանը և Նանուշյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 8001/07), Ղարիբյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 19940/05), «Հովհաննիսյանն ու Շիրոյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 5065/06), Սաֆարյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 576/06), «Երանոսյանը և այլք ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 3916/06), «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 69936/10):

¹⁹ <https://ombuds.am/images/files/0252f17326b9ec684029ae0da5b5bb9c.pdf>: Սեփականության իրավունքի հետ առնչվող այլ խնդիրներին կարելի է ծանոթանալ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում, որոնք հասանելի են հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/SpecialReports>

այլն): Ընդ որում, Փաստահավաք հանձնաժողովի գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովելու համար օրենքով կարող է նախատեսվել ենթադրյալ խախտումներ կատարած անձանց կողմից ինքնակամ ներկայանալու և էական նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակող բացատրություն տալու դեպքում նրանց քրեական հետապնդումից անձեռնմխելիություն ձեռք բերելու հնարավորությունը:

Հանձնաժողովը ձևավորվելու է 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում: Հանձնաժողովը կազմված է լինելու առավելագույնը 20 անդամից, գործողության ժամկետը երկու տարի է՝ հնարավորություն նախատեսելով անհրաժեշտության դեպքում ժամկետը երկարաձգել ևս մեկ տարով: Հանձնաժողովը ստեղծվելու է Փաստահավաք հանձնաժողովի մասին օրենքով (անհրաժեշտության դեպքում օրենքի նախագծին կից կներկայացվի այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթ), որով սահմանվելու են դրա կազմավորման և գործունեության կարգը, նպատակները, անդամներին ներկայացվող պահանջները, լիազորությունները, զեկույցի կազմման առանձնահատկությունները և այլ հարցեր: Հանձնաժողովում ներկայացված են լինելու հասարակության մեջ հեղինակություն վայելող անձինք՝ ապահովելով հասարակության տարբեր սոցիալական խմբերի՝ տարբեր սեռերի, ազգային փոքրամասնությունների, խախտումներից տուժած անձանց ներկայացուցիչների, հեղինակություն վայելող գիտնականների, իրավաբանների, մարդու իրավունքների մասնագետների և այլ խմբերի ներկայացվածությունը:

Հանձնաժողովի անդամների ընտրության կարգը պետք է ապահովի այդ գործընթացի թափանցիկությունը և մասնակցայնությունը: Ընթացակարգը պետք է ընդգրկի հասարակական կազմակերպությունների, խախտումներից տուժած անձանց միավորումների, գիտական/կրթական հաստատությունների կողմից թեկնածուների առաջադրումը և պարունակի թեկնածուների ընտրության գործում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լայն մասնակցության և պարտադիր հանրային քննարկումների վերաբերյալ պահանջներ: Հանձնաժողովի անդամների ընտրության մեխանիզմներ ներդնելիս պետք է բացառվի ոչ միայն հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ կապերի առկայությունը, այլև ապահովվեն քաղաքական ազդեցություններից թեկնածուների գործնական անկախության երաշխիքները: Հանձնաժողովի անդամներին ընտրելու է Ազգային ժողովը, միաժամանակապես հավելվելու է նաև խորհրդարանական ընդդիմության ներգրավվածությունը թեկնածուների առաջադրման և ընտրության գործընթացում:

Առաջարկվող օրենքը պետք է նաև կարգավորի հանձնաժողովի գործունեության սկզբունքները, որոնք պետք է ներառեն անկախության, անաչառությունը, ապաքաղաքանացվածության սկզբունքները: Անդրադարձ պետք է կատարվի նաև հանձնաժողովի՝ վկաներ հրավիրելու և նրանց լսելու, անհրաժեշտության դեպքում քրեական գործերի նյութերին և օրենքով պահպանվող տեղեկություններին հասանելիություն ունենալու, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և դրանց պաշտոնատար անձանցից աջակցություն հայցելու և ստանալու, վկաների

անվտանգության ապահովմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու, հանրային քննարկումներ կազմակերպելու և այլ իրավասություններին:

Հանձնաժողովի գործունեության վերջնարդյունքը զեկույցի հրապարակումն է, որտեղ արտացոլված են փաստահավաք գործունեության ընթացքում հավաքված տեղեկությունները: Հավաքված տեղեկությունների հիման վրա հանձնաժողովը զեկույցում Ազգային ժողովին և Կառավարությանը ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն՝ այդ իրավախախտումներից տուժած անձանց իրավունքների վերականգնման հնարավորության, ձևերի, չափերի և դրա անհրաժեշտության, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտության և ուղղությունների վերաբերյալ:

Իրավունքների վերականգնում

Խախտումների մասին տեղեկությունների հավաքման արդյունքում հնարավոր կլինի դիտարկել տուժողների իրավունքների վերականգնման հարցը այնքանով, որքանով դա հնարավոր է: Որպես իրավունքի վերականգնման միջոցներ կարող են կիրառվել գույքային հատուցումները (միանվագ կամ պարբերական վճարումների ձևով), առողջապահական, կրթական ծառայություններին հասանելի դարձնելու հնարավորությունը, ինչպես նաև ներողության պաշտոնական հրապարակային հայցումը, տուժողի համաձայնությամբ նրա պատմության հրապարակումը և այլն:

Պատասխանատվության վրա հասնելը

Փաստահավաք հանձնաժողովն իր գործունեության ընթացքում հանցագործությունների վերաբերյալ նոր տեղեկությունների ստացման դեպքում պետք է հնարավորություն ունենա դրանք հաղորդելու իրավապահ մարմիններին՝ քրեական վարույթի վերաբացում իրականացնելու կամ նոր քրեական գործ հարուցելու հնարավորությունը քննարկելու նպատակով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Պատասխանատվություն կիրառելու գործընթացը դուրս է Փաստահավաք հանձնաժողովի իրավասությունից և գտնվում է բացառապես իրավապահ մարմինների և դատարանների լիազորությունների շրջանակում: Փաստահավաք հանձնաժողովը կարող է օժանդակել միայն տեղեկությունների փոխանցման եղանակով: Պատասխանատվության կիրառումը պետք է հիմնված լինի բացառապես Սահմանադրության և օրենքների վրա՝ ի թիվս այլնի հաշվի առնելով վաղեմության ժամկետները:

Զեկույցում ներկայացված տեղեկությունների ամփոփում և ինստիտուցիոնալ բարեփոխումներ

Փաստահավաք հանձնաժողովի աշխատանքների վերջնարդյունքը զեկույցի պատրաստումը և հրապարակումն է: Զեկույցը առնվազն պետք է ներառի կատարված աշխատանքը, ներառյալ՝ տուժողների պատմությունների ամփոփ նկարագիրը, դրանց տրվող գնահատականը, իրավունքների վերականգնման վերաբերյալ խորհրդատվական

առաջարկը: Զեկույցի հրապարակումից հետո իրավասու մարմինների կողմից կարող են իրականացվել ձեռք բերված փաստերի նյութականացման աշխատանքներ (արխիվացիա, իրավունքների վերականգման հնարավորության և ձևերի քննարկում և այլն):

Անցումային արդարադատության գործիքների կիրառման, ստացված տեղեկությունների ամփոփման, զեկույցի պատրաստման և հրապարակման արդյունքում պետք է դիտարկել ինստիտուցիոնալ բարեփոխումների կիրառման հնարավորությունը բոլոր այն ոլորտներում, որտեղ տեղեկությունները վկայում են համակարգային խնդիրների առկայության մասին: Դա պետք է արտացոլվի նաև մշտադիտարկման այնպիսի համակարգերի ներդրմամբ, որոնց կիրառումը կբացահայտի հնարավոր խախտումները և կահազանգի դրանց առկայության վերաբերյալ: Այդ բարեփոխումների նպատակը պետք է լինի այն հիմնադրույթը, որ խախտումները այլևս երբեք չպետք է կրկնվեն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Սահմանադրական բարեփոխումների անցկացում

Սահմանադրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության հիմնավորումը

Սահմանադրական փոփոխություններ կատարելու նախադրյալները ծագել են այն հանգամանքից, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների իրականացումը որոշակիորեն ուղղորդված է եղել այդ փոփոխությունները նախաձեռնող քաղաքական ուժի շահերով²⁰: Մասնավորապես, Թրանսփերենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի «Կարծիք սահմանադրական փոփոխությունների նախատեսվող հանրաքվեր՝ միջազգային ստանդարտներին անհամապատասխանության վերաբերյալ» զեկույցի համաձայն՝ սահմանադրական փոփոխությունները նախաձեռնվել են գործող նախագահի՝ իշխանությանը մնալու ցանկությունը բավարարելու նպատակով: Սահմանադրական փոփոխությունները նրան հնարավորություն կտան շարունակել առաջնորդի իր դերակատարությունը Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի պաշտոնում, ինչպես նաև ապահովել իր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության (<<Կ) մենաշնորհային իշխանությունը: Լուրջ մտահոգություններ կան, որ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամները գործել են շահերի բախման իրավիճակում: Սահմանադրական փոփոխությունները թելադրված չեն եղել որևէ օբյեկտիվ անհրաժեշտությամբ, օրինակ՝ քաղաքական ճգնաժամով կամ հանրային պահանջով, որ կարողանար արդարացնել կառավարման համակարգի նման շուտափույթ փոփոխությունը: Եթե չկան օբյեկտիվ նախադրյալներ, նման հակասական փոփոխության

²⁰ Այս մասին են վկայում հետևյալ զեկույցները, որոնք հասանելի են՝ <https://transparency.am/hy/news/view/1086>
http://www.aprgroup.org/images/Library/Constitution/report_constitution_web_q.pdf

շուրջ պետք էր առնվազն ծավալել համապարփակ ու երկարատև խորհրդակցություն քաղաքական ու քաղաքացիական հասարակության դերակատարների մասնակցությամբ՝ հանգելու ընդհանուր կոնսենսուսի և հիմնավոր փաստարկման, ինչը տեղի չի ունեցել: Փոփոխությունների ամբողջական տեքստի հրապարակումից հետո Հայաստանի հասարակությանը փաստացիորեն ընդամենը 2 ամիս է հատկացված պետության մայր օրենքի փաստաթղթի վերաբերյալ արձագանք ներկայացնելու համար²¹: Ի հավելումն իրավիճակի վերաբերյալ վերոնշյալի՝ նախատեսվող հանրաքվեն չի համապատասխանում նաև հանրաքվեի միջազգային չափանիշներին, ինչը սահմանված է Վենետիկի հանձնաժողովի Հանրաքվեների անցկացման հաջողված փորձի կանոնագրքով²²:

Սահմանադրական փոփոխությունների իրականացումը նախաձեռնած իշխանությունների համար առաջնահերթությունը վստահության ճգնաժամը հաղթահարելու խնդիրն է, իսկ սահմանադրական փոփոխությունները ժամանակավրեպ են այնքանով, որքանով չկա ձևավորված հասարակական պահանջ, անհասկանալի են Սահմանադրության փոփոխության պատճառներն ու իրական նպատակները: Բացասական է գնահատվել այն հանգամանքը, որ Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի ստեղծումը նախաձեռնվել է նախագահի կողմից և անդամների մեծամասնությունը պետական պաշտոնյաներ են²³:

Ընդունելով հանդերձ, որ 2015 թվականի փոփոխություններով ընդունված Սահմանադրությունը ունի որոշ առավելություններ նախորդ՝ 2005 թվականի փոփոխություններով ընդունված սահմանադրության համեմատ, մասնավորապես՝ էականորեն բարելավվել է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանումը, այնուամենայնիվ՝ Սահմանադրությամբ առկա են մի շարք խնդրահարույց կարգավորումներ, որոնք, պայմանավորված լինելով սուբյեկտիվ կամ օբյեկտիվ գործոններով, խաթարում են իրավունքի գերակայության սկզբունքը, որի հաստատմանը և ամրապնդմանն է ուղղված եղել հենց Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնումը²⁴:

Որպես խնդրահարույց նորմի օրինակ կարելի է վկայակոչել Սահմանադրության 213-րդ հոդվածը, որը նախատեսել է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Այս կարգավորումը հանգեցրել է սահմանադրաիրավական նորմի երկակի մեկնաբանության: Նույնիսկ բովանդակային առումով քննարկման առարկա չդարձնելով այդ մեկնաբանությունները՝ ակնհայտ է մի

²¹ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://transparency.am/hy/news/view/1086>

²² Տե՛ս Հանրաքվեի բարեխիղճ գործելակերպի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կանոնագիրքը, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29008-e>

²³ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.aprgroup.org/images/Library/Constitution/report_constitution_web_q.pdf

²⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, էջեր 9-12:

հանգամանք, որ ներկա իրավիճակում կենսագործված չէ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական դատարանի կազմավորման մոդելը: Թեպետ բոլոր այլ դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների ընտրությունը կամ նշանակումը 2018 թվականին իրականացվել է փոփոխված Սահմանադրությամբ սահմանված կարգով՝ Սահմանադրության 215-րդ հոդվածի ուժով:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական փոփոխությունները կատարելուց նախաձեռնող խումբը միտված է եղել ամրագրել այնպիսի հոդվածներ, որոնք հակասում են իրենց իսկ կողմից ի սկզբանե ընդունված սկզբունքներին: Հատկանշական է, որ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում որպես կառավարման տվյալ պահին գործող համակարգի խնդիր առանձնացված է հետևյալը. «Չի հաղթահարվում պետական իշխանության գերանձնավորման հնարավորությունը՝ սուբյեկտիվիզմի տարաբնույթ դրսևորումներով հանդերձ: Դա իր հերթին արգելակ է դառնում իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման համար, ձևավորվում են չհիմնավորված սոցիալական սպասելիքներ»: Սակայն, կարծեք թե, վերը բերված օրինակը վկայում է, որ 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունները նույնպես միտված չեն եղել հաղթահարել սուբյեկտիվիզմը և ստեղծել համակարգ, որտեղ իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը իրական է:

Կամ օրինակ, Սահմանադրության մեջ առկա կարգավորումները հնարավորություն չեն տալիս սահմանել Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման արդյունավետ ընթացակարգ, ինչն անձի՝ իր դեմ կայացված ակտի բողոքարկման իրավունքի խախտում է. դատավորը պետք է ունենա արդյունավետ բողոքարկման կառուցակարգ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթում²⁵:

Սահմանադրական փոփոխությունների հիմնական նպատակը բոլոր տեսակի սուբյեկտիվ գործոններից զերծ, ժողովրդի կողմից առանց որևէ ուղղորդման, իր ազատ կամահայտնության արդյունքում ընդունված Սահմանադրություն ունենալն է:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելու համար 2020 թվականի առաջին եռամսյակում նախատեսվում է Կառավարության կողմից ստեղծել սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, որը կքննարկի սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու հարցը և կներկայացնի սահմանադրական

²⁵ St'u Recommendation CM/Rec (2010)12, կետ 69, The Venice Commission, Opinion On The Draft Judicial Code of Armenia, 09.10.2017, Strasbourg, կետեր 143-450:

փոփոխությունների նախագիծ: Հանձնաժողովը պետք է կազմավորվի դրա կազմավորման վերաբերյալ Կառավարության հաստատած կարգի համաձայն, որով պետք է նախատեսվեն Հանձնաժողովի անդամների ընտրության պաշտադ մեխանիզմներ: Հանձնաժողովի կազմավորման հարցում պետք է ապահովել քաղաքացիական հասարակության, գիտակրթական հաստատությունների մասնակցությունը, հանձնաժողովի անդամների գործնական անկախության, պրոֆեսիոնալիզմի, անաչառության, բարձր հեղինակության և պատշաճ մասնագիտական հմտությունների առկայության երաշխիքները: Հանձնաժողովի անդամների գերակշիռ մասը պետք է ընտրվի մասնագիտական շրջանակներից, մասնավորապես՝ իրավաբան-գիտնականներից, իսկ քաղաքական ներկայացվածության առումով հանձնաժողովի կազմում պետք է ապահովել նաև խորհրդարանական ընդդիմության պատշաճ մասնակցությունը: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը, ի թիվս այլնի, պետք է քննարկի մի շարք հայեցակարգային հարցեր, որոնցից են վերաբերական կառույցներին անդամակցելիս տվյալ վերաբերական կառույցի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կիրառելիության առանձնահատկությունները, Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին տրված լիազորությունների շրջանակը, Ազգային ժողովի պատգամավորների ընտրության և խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգը, ինչպես նաև պատգամավորների թիվը, Սահմանադրությամբ նախատեսված՝ Կառավարությանը, Վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինների կազմավորման և լիազորությունների հետ կապված հարցերը, Սահմանադրությամբ նախատեսված մարմինների միջև լիազորությունների տարանջատումը և հավասարակշռումը, Սահմանադրական դատարանի պատշաճ և բնականոն գործունեությանը խոչընդոտող հնարավոր սահմանադրաիրավական փակուղիների վերացումը, Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության և նշանակման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունների դադարեցման, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգը, դերը և լիազորությունները, Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկումը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 3-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմելը և այլն:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Ընտրական օրենսդրության բարեփոխում

Ընտրական	օրենսդրության	բարեփոխումների	իրականացման
անհրաժեշտության հիմնավորումը			

Ընտրական օրենսդրության բարեփոխումների առաջնային նպատակը Հայաստանում ժողովրդավարական ընտրական օրենսդրությամբ սահմանված համակարգի ինստիտուցիոնալ կայացումն է, որը հնարավոր է իրականացնել ընտրողների համար հասկանալի և կանխատեսելի ընտրակարգ ներդնելու, բոլոր օղակներում ընտրական վարչարարությունը բարելավելու, քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու, ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշումները բացառելու համաև անհրաժեշտ գործուն մեխանիզմներ ներդնելու, բազմակի քվեարկությունը բացառող երաշխիքներն ավելացնելու և քվեարկության գործընթացների մատչելիությունն ապահովելու, ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը երաշխավորելու, ընտրական վեճերի գործընթացները հստակեցնելու, դրանց արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:

Որպես իրապես ազատ և արդար գնահատված՝ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններից հետո²⁶ անհրաժեշտ է ընտրական օրենսդրության մեջ նախատեսել այնպիսի կառուցակարգեր, որոնք վերոնշյալ ընտրությամբ ամրագրված ձեռքբերումները, այն է՝ հանրության շրջանում ընտրությունների նկատմամբ վստահությունը, ընտրվող իշխանությունների լեգիտիմությունը, ինչպես նաև հասարակության ընկալումներում ընտրական գործընթացի արդարացիության նկատմամբ վստահությունը կդնեն օրենսդրական հենքի վրա: Եվ դրա արդյունքում նմանատիպ ընտրությունները կդառնան ոչ թե բացառություն, այլ կանոն:

Մինչ 2018 թվականը Հայաստանում գոյություն ունեցած կառավարման և վստահության համակարգային ճգնաժամը հանգեցրել է ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակի (հասարակական կարծիքի ուսումնասիրությամբ զբաղվող Գեյափ ընկերության կողմից 2011 թվականին 125 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում իրականացված հարցումների համաձայն՝ կանանց ընդամենը 13%-ը, իսկ տղամարդկանց 12%-ն է հավատում ընտրությունների ազնվությանը²⁷):

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրական օրենսդրության բարեփոխումն, ի թիվս այլնի, ընդգրկելու է հետևյալ ուղղությունները

- թեկնածուների տարածքային ցուցակների վերացում, պարզ համամասնական ընտրակարգի ընդունում,
- կուսակցական բազմակարծության ապահովման նպատակով՝ ընտրվելու նվազագույն շեմի իջեցում,
- կոալիցիաների ձևավորման կարգի բարեփոխում,

²⁶ ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցը տե՛ս հետևյալ հղումով՝ <https://transparency.am/files/publications/1554816519-0-788440.pdf>:

²⁷ <https://news.gallup.com/poll/157997/women-worldwide-less-confident-men-elections.aspx>

- ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունների բարձրացում, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգի վերանայում,
- ընտրագրավի գումարի չափի վերանայում,
- հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում,
- ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացում,
- բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների բարեփոխում,
- դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում

Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում

Ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հանձնառությունը ենթադրում է առաջին հերթին անկախ և անաչառ դատական համակարգի առկայություն: 1985 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված Դատական իշխանության Անկախության սկզբունքների²⁸ համաձայն՝ դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորվի տվյալ պետության կողմից և ամրագրում ստանա Սահմանադրության կամ օրենքի մակարդակում: Դատական իշխանության անկախությունը ապահովելը բոլոր պետական և ոչ պետական կառույցների պարտականությունն է: Ավելին, սկզբունքներով սահմանվել է դատական գործընթացների անհարկի միջամտության ու կայացված դատական որոշումները վերանայելու արգելքը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարականով²⁹ սահմանվում է դատարանների անկախության նպատակը, համաձայն որի՝ այն նպատակ ունի երաշխավորել յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը՝ առանց անհարկի ճնշումների, հիմնվելով իրավական հիմքերի վրա: Դատավորների անկախությունը պետք է դիտարկվի որպես ազատության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի անաչառ կիրառության երաշխիք:

Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության ապահովման համար կարևոր է դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունե համակարգի առկայությունը: Հաշվի առնելով այդ մարմինների լիազորություններն ու դերը դատական իշխանության կազմակերպման և գործունեության գործում՝ կարևոր է

²⁸ Basic Principles on the Independence of the Judiciary, Adopted by the Seventh United Nations Congress on 1985, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx>

²⁹ Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարական, կետ 3

Բարձրագույն դատական խորհրդի և Դատավորների ընդհանուր ժողովի գործունեության՝ գործնականում թափանցիկության ապահովումը, մասնագիտական ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: Բացի այդ, դատական իշխանության անկախության ամրապնդման տեսանկյունից հիմնաքարային նշանակություն ունեն դատական իշխանության ֆինանսավորման, դատավորների նշանակման և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգավորումների կատարելագործումը, դատավորների և նրանց աշխատակազմի համաչափ վարձատրությունը, դատավորների նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան ընթացակարգերի ներդրում

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով թեև էապես բարեփոխվել է դատավորների նշանակման կարգը, սակայն դրա գործնական կիրառման ընթացքում արդեն իսկ վեր են հանվել բազմաթիվ խնդիրներ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական հարթություններում: Խնդիրները, մասնավորապես, վերաբերում են դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գրավոր փուլի գնահատման պատճառաբանվածությանը, հարցազրույցի ընթացակարգին և գնահատման չափանիշներին, քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգին և որոշումների ընդունման թափանցիկությանը: Մատնանշված խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու համար անհրաժեշտ է կատարելագործել դատավորների նշանակման օրենսդրական կանոնակարգումները և ապահովել նկարագրված գործընթացների թափանցիկությունը և հանրային հասանելիությունը, ինչը, ի թիվս այլնի, կհանգեցնի դատավորների նշանակման կարգի վերաբերյալ հանրության վստահության բարձրացմանը: Նախատեսված բարեփոխումները հիմնականում ընդգրկում են՝

ա) գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխություն.

բ) գնահատման պատճառաբանվածության ապահովմանն ուղղված կարգավորման նախատեսում.

գ) միջազգային առաջատար փորձի կիրառմամբ մշակված հոգեբանական թեստի անցկացում.

դ) դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածություն.

ե) քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրում և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովում:

Արդյունքում գնահատման հանձնաժողովում ընդգրկվելու են առավել ձեռնհաս դատավորները, հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է պատասխանատու լինի իր նշանակված գնահատականի և դրա պատճառաբանվածության համար, ստեղծվելու է բողոքարկման հանձնաժողով, ներդրվելու է նախապես մշակված էլեկտրոնային

համակարգի միջոցով անցկացվող հոգեբանական թեստի ինստիտուտը, իսկ Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվելու է բաց քվեարկությամբ: Այս բարեփոխումը կհանգեցնի թեկնածուների ընտրության գործընթացի թափանցիկության բարձրացմանը և այդ գործընթացին ապօրինի միջամտությունների բացառմանը, ինչն էլ իր հերթին կբարձրացնի դատավորների անկախությունը և արդարադատության որակը:

Դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի և ընթացակարգերի ներդնում

Դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կանոնակարգումների հստակությունը և միջազգային չափանիշներին համապատասխանությունը նրանց անկախության ապահովման կարևոր գրավականներից է: Դատական օրենսգիրքն էականորեն բարելավել է կարգապահական պատասխանատվության կարգավորումները, սակայն դեռևս առկա են որոշակի թերություններ, որոնք խոչընդոտում են կարգապահական պատասխանատվության՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան կիրառելուն: Մասնավորապես՝

ա) դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը բավականաչափ հստակ չեն, ուստի կանխատեսելի չէ դրանց մեկնաբանությունը.

բ) գործող օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժերի համակարգը խիստ սահմանափակ է և ընդգրկում է միայն ամենամեղմ տույժերը և ամենախիստը՝ լիազորությունների դադարեցումը, ինչը հնարավորություն չի տալիս ապահովել կարգապահական պատասխանատվության համաչափությունը.

գ) բացակայում է դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման բողոքարկման ընթացակարգը.

դ) գործող օրենսգրքում դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը բավականին սահմանափակ գործիքակազմ ունի արդյունավետ և բազմակողմանի քննություն ապահովելու համար:

Սույն ռազմավարության նպատակներից է մատնանշված խնդիրներին արդյունավետ լուծումներ տալ: Մասնավորապես, նախատեսվում է հնարավորինս հստակեցնել դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ավելացնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, օրինակ՝ ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի ամբողջական հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով

Նախատեսված կարգով հանձնաժողովին ներկայացնել գույքի փոփոխությունը հիմնավորող պատշաճ նյութեր՝ նշված օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ լրացուցիչ պարզաբանման կամ նյութերի անհրաժեշտության դեպքում, ընդգծել, որ կարգապահական խախտումը պատասխանատվության հիմք կարող է լինել միայն այն դեպքում, երբ կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ընդլայնել կարգապահական տույժերի տեսակները, Բարձրագույն դատական խորհրդին լրացուցիչ գործիքներ տալ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցն արդյունավետ քննելու համար, օրինակ՝ սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ, նշանակել փորձաքննություն և պահանջել ապացույցներ՝ մի բան, որ գործող կարգավորման պայմաններում կարող է անել միայն դատավորի միջնորդությամբ:

Այս փոփոխությունների արդյունքում կապահովվի կարգապահական վարույթի կանխատեսելիությունը, արդյունավետությունը և դատական իշխանության անկախության և հաշվետվողականության միջև ողջամիտ հավասարակշռությունը:

Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացում

Սույն ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված միջոցառումները կոչված են ապահովելու անկախ, անաչառ և հանրության առջև հաշվետու դատական համակարգ, ինչը նաև բարձրացնելու է հանրության վստահությունը դատական համակարգի նկատմամբ: Միաժամանակ, դատական իշխանության հանրային դրական ընկալումները և վստահության բարձր աստիճանը ամուր և անկախ դատական համակարգ ունենալու կարևոր նախապայման է: Ի հավելումն, դատական իշխանության նկատմամբ հարգանքը այդ համակարգ ոլորտի առաջատար մասնագետների մոտքը խթանելու գրավական է: Ուստի, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դատական իշխանության և հանրության միջև համագործակցությունն ու արդյունավետ հաղորդակցությունը ապահովելու, ինչպես նաև բնակչության շրջանում դատական իշխանության դերի, բարձր առաքելության վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ: Այս ուղղության շրջանակներում ծրագրվում է կազմակերպել հանրային իրազեկման աշխատանքներ, որոնց շրջանակներում հանրությունը կիրազեկվի դատական բարեփոխումների (այդ թվում՝ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման, կարգապահական պատասխանատվության կառուցակարգերի բարելավման) ընթացքի, դրանց արդյունքում արձանագրված հաջողությունների, դատարանների գործունեության բարելավման, արդարադատության մատչելիության բարձրացման, դատարանի անկախության երաշխիքների գործնական կիրառման մասին, ինչի արդյունքում կբարձրանա վստահությունը դատական իշխանության նկատմամբ, ինչպես նաև կբարձրանա դատավորի պաշտոնի գրավչությունը:

Դատավորի դերի և դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացումը թույլ կտա դատական համակարգ ներգրավել նոր, բարձր որակավորում ունեցող կադրերի, ինչի անհրաժեշտությունը հատկապես կարևոր կարող է դառնալ

դատավորների շարունակական բարեվարքության գնահատման արդյունքում առանձին դատավորների լիազորությունների դադարեցման դեպքում:

Դատավորների և նրանց աշխատակազմի վարձատրության բարձրացում և թվակազմի ավելացում

Դատավորներին և նրանց աշխատակազմին մրցունակ աշխատավարձի տրամադրումը, անկասկած, դատական համակարգ բարձր կարգի մասնագետների մուտքը խրախուսելու և նրանց անկախությունն ապահովելու տեսանկյունից անկյունաքարային նշանակություն ունի: Ուստի սույն ռազմավարությամբ ամրագրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է դատավորներին և նրանց աշխատակազմին ապահովել համարժեք վարձատրությամբ, ինչպես նաև ավելացնել նրանց թվակազմը: Դատավորների թվակազմի ավելացումը հնարավորություն կտա ապահովել դատական բարեփոխումների հարթ և սահուն ընթացքը՝ բացառելով բարեվարքության գնահատման արդյունքում առաջացած՝ դատավորների թվի հնարավոր կրճատումը:³⁰ Դատավորների աշխատակազմի թվակազմի ավելացումը՝ այդ թվում բացի օգնականներից և գործավարներից ընդգրկելով նաև բարձր որակավորում ունեցող փորձագետների, կբարձրացնի դատական ակտերի որակը և կամրապնդի դրանցում մարդու իրավունքների միջազգային չափանիշների կիրառման պրակտիկան:

Ներկայումս դատավորներին և նրանց աշխատակազմին առաջարկվող վարձատրությունը համարժեք չէ նրանց ծանրաբեռնվածությանը³¹, ինչի հետևանքով ոչ միայն վտանգվում է դատարանների անաչառությունը և ստեղծվում են կոռուպցիոն ռիսկեր, այլև առաջատար իրավաբանների համար դատական համակարգը մնում է ոչ գրավիչ: Օրինակ՝ Երևան քաղաքում քաղաքացիական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 632 գործ, այնինչ՝ 2018 թվականին 1290 գործ, իսկ մարզերում՝ 2013 թվականին՝ 469 գործ, այնինչ՝ 2018 թվականին 1447 գործ³²: Երևան քաղաքում քրեական գործերով մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը 2013 թվականին կազմել է 66 գործ, իսկ 2018 թվականին՝ 81 գործ, մարզերում՝ 2013 թվականին՝ 74 գործ, 2018 թվականին՝ 84 գործ³³: Մինչդեռ՝ 2014 թվականից ի վեր դատավորների պաշտոնային դրույքաչափը փոփոխության չի ենթարկվել:

³⁰ Ծանոթություն. ներկայում ՀՀ արդարադատության ակադեմիայում ուսումնառություն են անցնում 17 դատավորի թեկնածուի հավակնորդ, ում ուսումնառությունն ավարտվում է 2020 թվականի մայիսին, 17 դատավորի թեկնածուի հավակնորդ, ում ուսումնառությունն ավարտվում է 2019 թվականի հոկտեմբերին:

³¹ Դատավորի ծանրաբեռնվածության վերաբերյալ ավելի մանրամասն տես Բարձրագույն դատական խորհրդի տարեկան հաղորդումը՝ http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf

³² Տե՛ս նույն տեղում, էջ 62:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 62-63:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է նախատեսել դատավորների և նրանց աշխատակազմի վարձատրության բարձրացում, ինչպես նաև թվակազմի ավելացում: Բարեփոխումների այս ուղղության արդյունքում դատական իշխանությունն ավելի գրավիչ կդառնա առաջատար մասնագետների համար, կնվազեն դատական իշխանությունում կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև զգալիորեն կնվազի դատավորների ծանրաբեռնվածությունը, ինչը կնպաստի գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում

Դատական իշխանության անկախությունը և հաշվետվողականությունը սերտորեն փոխկապակցված են. հաշվետվողականությունն անկախության նախադրյալ է: Այն դատական իշխանությունը, որը չունի հանրային հաշվետվողականություն, չի կարող վայելել հանրության վստահությունը, ինչը, ի վերջո, վտանգի տակ կդնի հենց անկախությունը: Սույն ռազմավարությունը նպատակաուղղված է ինչպես հաշվետվողականության, այնպես էլ անկախության ամրապնդման համար հիմքեր ստեղծելուն և երկու կոնցեպտների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելուն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական համակարգի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և վիճակագրության հրապարակում

Ներկայումս դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը և վիճակագրությունն ունեն սահմանափակ հասանելիություն: Վիճակագրական տվյալները հասանելի են www.court.am կայքում, սակայն կայքի տեղեկատվական բազան ժամանակին չի թարմացվում, իսկ վիճակագրական տեղեկատվությունը ինքնաշխատ չի գեներացվում և ամփոփված չէ օգտագործողի համար հարմար ձևաչափով: Մինչդեռ՝ դատական համակարգի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից էական նշանակություն ունի հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակումը: Ուստի, անհրաժեշտ է ապահովել դատական համակարգի գործունեության վերաբերյալ

ամբողջական հաշվետվությունների և վիճակագրության հանրային հասանելիությունը, ինչը կբարձրացնի դատական իշխանության հանրային հաշվետվողականությունը:

Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման գործընթացի բարելավում, թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում

Ներկայումս Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկությամբ, ինչն առաջացնում է հասարակության անվստահությունը և կասկածի տակ է դնում որոշումների ընդունման հարցում խորհրդի անդամների անկախությունը և հաշվետվողականությունը: Բացի այդ, առանձին որոշումների պարագայում օրենքում բացակայում է դրանց պատճառաբանման պահանջը: Ի հավելումն, Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու համար սահմանված անհրաժեշտ ձայների քանակը ներկայումս առաջացրել է այդ մարմնի կողմից կարևորագույն որոշումներ ընդունելու անհնարինության, հատկապես նաև այն դեպքերում, երբ ԲԴԽ անդամներից մեկն օրենքով սահմանված կարգով հայտնում է ինքնաբացարկ: Նման պայմաններում անհրաժեշտ է փոփոխել նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշում ընդունելու համար անհրաժեշտ ձայների քանակի վերաբերյալ կարգավորումները: Իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ է նախատեսել խորհրդի կողմից քվեարկության կարգի թափանցիկության և որոշումներ կայացնելու պատճառաբանվածության պահանջ, ինչպես նաև փոփոխել որոշումներ ընդունելիս ձայների հարաբերակցության վերաբերյալ կարգավորումները: Նման գործողությունները հնարավորություն կտան Բարձրագույն դատական խորհրդին արդյունավետորեն իրականացնել իր առջև Սահմանադրության և օրենքով դրված խնդիրները:

Կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգի բարելավում

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող՝ Կարգապահական հանձնաժողովի անդամների՝ հինգ տարով և միայն դատավորների կազմից ընտրվելը դատական համակարգի հաշվետվողականության լուրջ խոչընդոտ է, քանի որ չի ապահովում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացի թափանցիկությունը: Վենետիկի հանձնաժողովը նույնպես ընդգծել է, որ նման կարգավորումը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցում կորպորատիվ մոտեցման սպառնալիք է ստեղծում³⁴: Խնդրի լուծումն ընկած է հանձնաժողովի անդամների պաշտոնավարման ժամկետի կրճատման, ինչպես նաև հանձնաժողովում բացի դատավորներից նաև ոչ

³⁴ Տե՛ս The Venice Commission, Opinion On The Draft Judicial Code of Armenia, 09.10.2017, Strasbourg, կետ 135:

դատավոր անդամների ընդգրկման դաշտում: Ուստի, նախատեսվում է փոխել կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգը՝ դրանում բացի դատավորներից ընդգրկելով նաև հասարակության ներկայացուցիչներ: Այս բարեփոխումը թույլ կտա խուսափել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելիս կորպորատիվ մոտեցման ռիսկից:

Բարձրագույն դատական խորհրդի անդամների և դատավորների գույքի, եկամուտների, շահերի, ծախսերի ամբողջական հայտարարագրում

Գործող օրենսդրությունը չի պարունակում ամբողջական, համալիր կարգավորումներ պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման վերաբերյալ, ինչը հանրության մոտ անվստահություն է առաջացնում կոնկրետ դատավորների նկատմամբ, ինչպես նաև խոչընդոտներ է ստեղծում դատավորի անհատական հաշվետվողականության ապահովման համար: Խնդրին արդյունավետ լուծում տալու նպատակով անհրաժեշտ է բարեփոխել հայտարարագրման կառուցակարգը³⁵: Բարեփոխումը հնարավորություն կտա ապահովել դատավորների գույքի ձեռքբերման օրինականության ստուգման արդյունավետությունը, ինչը կնպաստի դատական իշխանության մեջ կոռուպցիայի հաղթահարմանը և դատական իշխանության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը:

ԿՈՐՈՒՄԱԿԱՐԳԱՆ ՆՊԱՏԱԿ

Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ

Դեռևս 2013 թվականին մարդու իրավունքների պաշտպանի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույցով հանրային իշխանության օրակարգ մտավ դատական համակարգում լայնամասշտաբ կոռուպցիայի առկայության խնդիրը: Հետագա տարիներին տարբեր տեղական և միջազգային կազմակերպություններ շարունակաբար ընդգծել են այս խնդիրը և դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը:³⁶ «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2017»-ի տվյալներով հարցվածների 41%-ը կարծում է, որ Հայաստանի դատավորների մեծամասնությունը կամ բոլորը կաշառք են վերցնում, իսկ 17%-ը կարծում է, որ միայն որոշ դատավորներ են կաշառք վերցնում: Անշուշտ, չի կարելի անտեսել այն զգալի առաջընթացը, որ դատական համակարգը գրանցել է վերջին տարիներին ինչպես կոռուպցիայի հաղթահարման, այնպես էլ արհեստավարժության բարձրացման հարցերում: Այնուամենայնիվ, հատկապես վերջին տարվա ընթացքում հասարակության լայն զանգվածների կողմից դատական համակարգի

³⁵ Հայտարարագրման բարեփոխումների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:

³⁶<http://www.ombuds.am/images/files/2ddebfe4a4ecb335d3cfd24f3cef719e.pdf> , https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2017_arm.pdf,

նկատմամբ բարձրաձայնված անվստահության պատճառներից մեկը կոռուպցիոն ռիսկերն են: Դատական համակարգում կոռուպցիայի հաղթահարումը սույն ռազմավարության բացարձակ առաջնահերթություններից է³⁷:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատավորների բարեվարքության գնահատում

Սույն ռազմավարության, ինչպես նաև Կառավարության ծրագրի բացարձակ առաջնահերթություններից է դատավորների բարեվարքության գնահատման արդյունավետ համակարգի ներդնումը՝ այդ թվում դատավորի գույքային դրության, գույքի օրինականության ստուգման մասով: Ընդ որում՝ բարեվարքության ստուգման կառուցակարգի սկզբունքային կետերն են՝

ա) բարեվարքության գնահատումը չպետք է իրականացվի ժամանակավոր գործիքակազմի միջոցով և չպետք է կրի ժամանակավոր բնույթ: Փոխարենը, գործընթացը կրելու է շարունակական բնույթ, և դատավորները մշտապես անցնելու են նման գնահատման միջով՝ վարքագծի կանոնի յուրաքանչյուր ենթադրյալ խախտման համար կարգապահական վարույթի շրջանակներում:

բ) դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար ստեղծվելու է ոչ թե նոր՝ *ad hoc* մարմին, այլ այդ հարցի լուծման համար պատասխանատու է լինելու դատական համակարգի անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված մարմինը՝ Բարձրագույն դատական խորհուրդը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնող մարմինը լինելու է Բարձրագույն դատական խորհուրդը, հիմնարար նշանակություն ունի խորհրդի անդամների նկատմամբ բարձր վստահությունը ինչպես դատավորների, այնպես էլ լայն հանրության շրջանում: Այս համատեքստում, նախատեսվում է կարգավորում, որի շրջանակում բացի դատավորների գույքային դրության ստուգումից, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պետք է քննի Բարձրագույն դատական խորհրդի անդամների հայտարարագրերը³⁸ և խախտումներ հայտնաբերելու դեպքում նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար համապատասխան նյութերը Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկի: Այս գործընթացը թույլ կտա բարձրացնել վստահությունը Բարձրագույն դատական խորհրդի նկատմամբ և կառուցողական մթնոլորտում բնականոն հունով իրականացնել դատավորների բարեվարքության ստուգումը:

³⁷ Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:

³⁸ Բարեվարքության այլ բաղադրիչների ստուգումը հնարավոր է միայն ենթադրյալ խախտման առկայության պարագայում:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի համապատասխանեցում կոռուպցիայի հաղթահարման նպատակին

Գործող օրենսդրությամբ կարգապահական պատասխանատվության հիմքերը չեն ընդգրկում դատավորների՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի վերլուծության արդյունքում հայտնաբերված խնդիրների հիման վրա կարգապահական վարույթ հարուցելը, ինչը թույլ չի տալիս անհրաժեշտության դեպքում բազմակողմանիորեն գնահատել դատավորի բարեվարքությունը: Մինչդեռ, միջազգային պրակտիկայում գույքի հայտարարագրման հետ կապած խախտումները հաճախ են նշվում, որպես ավելի ծանր բնույթի կարգապահական խախտումներ, որոնք կարող են հանգեցնել ընդհուպ մինչև դատավորի լիազորությունների դադարեցմանը: Ուստի, անհրաժեշտ է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական հիմքերը համապատասխանեցնել դատական իշխանությունում կոռուպցիայի հաղթահարման նպատակին: Այս միջոցառումների արդյունքում կապահովվի այնպիսի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և ընդհուպ մինչև լիազորությունների դադարեցումը, որոնք որևէ կերպ չեն կարող հիմնավորել սխալ հայտարարագրի ներկայացումը կամ գույքի փոփոխության՝ օրինական եկամուտներով տեղի ունենալու հանգամանքը:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի կատարելագործում

Քանի որ գործող «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող մարմիններից որևէ մեկը չունի ո՛չ անհրաժեշտ մասնագիտացում, ո՛չ էլ համապատասխան օրենսդրական լիազորություններ դատավորների հայտարարագրերում առկա թերությունները և կոռուպցիոն ռիսկերը հայտնաբերելու համար, անհրաժեշտ է նման լիազորությամբ օժտել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է ընդլայնել ինչպես հանձնաժողովի, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները՝ անհրաժեշտ ապացույցներ պահանջելու և ստանալու հարցում: Այդ նպատակով, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվում է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի ընդլայնում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց բանկային, առևտրային, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու հնարավորություն:

Կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում

Պետք է նախատեսել և իրականացնել Բարձրագույն դատական խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների կարողությունների շարունակական զարգացում՝ իրենց առջև սույն ռազմավարությամբ և ծրագրված օրենսդրական փոփոխություններով դրված նպատակներն արդյունավետ իրագործելու,

դատական համակարգում կոռուպցիան հաղթահարելուն ուղղված հմտությունների զարգացման համար՝ այդ գործընթացում ապահովելով միջազգային փորձագետների ներգրավվածությունը: Բացի այդ, դատավորների շրջանում անհրաժեշտ է իրականացնել իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ իրենց վարքագիծը դատավորների վարքագծի և էթիկայի կանոններին համահունչ կազմակերպելու վերաբերյալ՝ հատկապես շեշտադրելով հակակոռուպցիոն կրթությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում

Դատարանների գործունեության արդյունավետության վերաբերյալ հետազոտությունները վեր են հանում դատական համակարգից օգտվողների անբավարարվածությունը, դատարանների ծանրաբեռնվածության պատճառով գործերի քննության չհիմնավորված երկարաձգումները, դատարանների շենքային պայմանների խնդիրներով պայմանավորված՝ արդարադատության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները, խոցելի անձանց մասնակցությամբ գործերի քննության հատուկ հմտությունների բացակայությունը և մի շարք այլ խնդիրներ: Մասնավորապես, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը («CEPEJ») Հայաստանի դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ վերլուծության մեջ նշում է, որ դատական համակարգից օգտվողների գնահատմամբ 0-6 բալային սանդղակում Երևանի ընդհանուր իրավասության դատարանում գործերի քննության արագության միջին բալային գնահատականը 2.5 է, իսկ դատավորների անկախության և անաչառության վերաբերյալ միջին բալային գնահատականը նույն սանդղակով՝ 2.4 է³⁹:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատարանների ծանրաբեռնվածության նվազեցում և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովում

Վերջին տարիներին Հայաստանում գնալով աճում է դատական գործերի թիվը, մինչդեռ, դատավորների թվակազմը գրեթե մնում է անփոփոխ, իսկ արտադատական եղանակով վեճերի լուծման մեխանիզմները դեռևս լիարժեք զարգացած չեն, որ նպաստեն դատարանների գերբեռնվածության նվազեցմանը:

Եթե 2013 թվականի ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 48 540 քաղաքացիական գործ, ապա 2017 թվականին այդ թիվը կազմել է 137 003 գործ, իսկ 2018 թվականին՝ 129 941 քաղաքացիական գործ: Կամ

³⁹ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.coe.int/en/web/cdcj/-/analysis-of-the-results-of-court-users-satisfaction-survey-of-all-courts-of-all-instances-of-armenia>

2013 թվականին ստացվել է 3376 սնանկության գործ, 2017 թվականին՝ 9218, իսկ 2018 թվականին՝ 9326 սնանկության գործ⁴⁰:

Դատարանների գերբեռնվածությունը խոչընդոտում է դատական գործերի արագ և արդյունավետ քննությանը՝ հանգեցնելով անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումների: Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ավելացնել դատավորների և դատավորի օգնականների թիվը, ներդնել վեճի լուծման այլընտրանքային արդյունավետ միջոցներ՝ այդ թվում էլեկտրոնային գործիքներ, ինչպես նաև ներդնել և ակտիվորեն օգտագործել էլեկտրոնային կառավարման համակարգերը:

Հակակոռուպցիոն դատարանի ստեղծում

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը պահանջում է առանձնահատուկ հմտություններ, գործը քննող դատավորների նկատմամբ հանրային բարձր վստահություն և բարձր մասնագիտական որակներ՝ հաշվի առնելով սույն ռազմավարությամբ հռչակված՝ դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթությունը, գործերի բարդությունը և Հայաստանյան իրավական համակարգ կոռուպցիայի դեմ պայքարի նոր ինստիտուտների ներդրումը: Մատնանշված խնդիրները կլուծվեն Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2019-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված նոր հակակոռուպցիոն դատարանի հիմնադրմամբ, որը ոչ միայն կապահովի կոռուպցիոն բնույթի գործերի անկախ, անկողմնակալ, պրոֆեսիոնալ քննություն, այլև կնվազեցնի ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածությունը քննարկման առարկա բնագավառում: Նախատեսվում է, որ Հակակոռուպցիոն դատարանի դատական ենթակայությունն ընդգրկելու է կոռուպցիոն հանցագործությունների, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննությունը:

Դատավորների կարողությունների շարունակական զարգացում

Սույն ռազմավարության առաջնահերթությունների տեսանկյունից կարևորվում է դատավորների կարողությունների զարգացումը հետևյալ բնագավառներում՝

- ա) կոռուպցիոն, տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների քննություն,
- բ) էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ կարևորվում է դատավորների՝ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ապացույցների հետ աշխատելու հմտությունների զարգացումը,
- գ) մասնագիտական վարքագծի կանոններ և էթիկա,
- դ) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կոնկրետ հոդվածների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք,

⁴⁰ Ծանրաբեռնվածության վերաբերյալ ավելի մանրամասն տես Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. տարեկան հաղորդումը՝ http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf

ե) դատավորի դերի, դատական ակտի պատճառաբանվածության, դատավորի անկախության գործնական մարտահրավերների հետ կապված հարցեր:

Դատավորների կարողությունների զարգացման և իրազեկության բարձրացման միջոցառումներում կարևորվում է միջազգային փորձագետների մասնակցությունը՝ միջազգային և եվրոպական առաջադեմ փորձը ներկայացնելու տեսանկյունից:

Քրեական, քրեական դատավարության, քրեակատարողական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի, ինչպես նաև այլ օրենքների հիմնարար փոփոխությունների ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա ապահովել այդ փոփոխությունների վերաբերյալ վերապատրաստումներ:

Դատարանների շենքային պայմանների բարելավում և տեխնիկական աջակցության տրամադրում

Հայաստանի Հանրապետությունում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածքի կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանազատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը դատարան ապահովելու խնդիրներ: Որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն: Հետևաբար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան վերանորոգման/վերակառուցման աշխատանքներ՝ այդ թվում՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարանների շենքերի մատչելիությունը:

Միաժամանակ՝ դատավորների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված, ինչը նախատեսվում է առաջիկայում, և Հակակոռուպցիոն դատարանի հիմնադրմամբ, օբյեկտիվորեն անհրաժեշտություն կառաջանա դատական իշխանությանը ապահովել նոր տարածքով (շենքով) և ենթակառուցվածքներով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Պեդական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ստեղծում

Կառավարության առաջնահերթություններից է պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, որը ենթադրում է կրկնվող գործառույթների վերհանում, դանդաղ, ոչ արդյունավետ, անհարկի բյուրոկրատական ընթացակարգերի կրճատում, տարբեր պետական հիմնարկներում և ստորաբաժանումներում իրականացվող միևնույն տեսակի գործառույթների կենտրոնացում և մեկտեղում, գործառույթների ծախսատարության գնահատում և ծախսերի նվազեցմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացում, պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի արդիականացում, ավտոմատացում և թվայնացում: Մինչ այս, առկա է դրական փորձ, որի շրջանակում պետության կողմից մատուցվող շուրջ 67 ծառայություն (այդ

թվում՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի, ՔԿԱԳ-ի, արտաքին գործերի նախարարության, ճանապարհային ոստիկանության կողմից մատուցվող ծառայություններ և այլն) պատվիրակվել է 50 սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների՝ նպատակ ունենալով ծառայությունը մատուցումը տարածքային առումով մոտեցնել քաղաքացուն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մեկ պատուհանի» սկզբունքով գործող միասնական գրասենյակի ստեղծում

Առաջնորդվելով նշված նպատակներով՝ նախատեսվում է պետական որոշ ծառայությունների մատուցման միասնական կենտրոնի ստեղծումը «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակ ստեղծելու հիմնական նպատակն է հանդիսանում մեկ տարածքային միավորում ընդգրկել պետական ծառայություններ մատուցող համապատասխան հիմնարկների սպասարկման կենտրոններ՝ իրավախորհրդատվության, դիմումների ընդունման և դրանց քննարկման արդյունքում ձևավորված փաստաթղթերի տրամադրման նպատակով:

Ծրագրի նպատակն է ոչ միայն հնարավորինս հարմարավետ դարձնել քաղաքացիների կողմից հայցվող հիմնական ծառայությունների մատուցումը, այլև բացառել դիմումի քննարկման արդյունքում որոշում կայացնող և դիմող հարաբերությունները: Արդյունքում, քաղաքացիների կողմից պահանջարկ ունեցող պետական ծառայությունների մատուցման տեղակայումը մեկ վայրում կնվազեցնի քաղաքացու տեղաշարժը վարչատարածքային շրջանների միջև՝ նվազեցնելով տրանսպորտային փոխադրումների ծախսերը, ինչպես նաև կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը կապված մատուցվող ծառայությունների հետ:

«Պետության կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակ» ծրագրով առաջին փուլում նախատեսվում է մեկ տարածքային միավորի կազմում տեղակայել արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության և Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման կենտրոնները՝ «մեկ պատուհանի» սկզբունքով:

Փորձագիտական ծառայություններ մատուցող պետական մարմիններում ընդգրկված ստորաբաժանումների միավորում

Դատական գործերի ժամկետի ձգձգման և արդյունավետության վրա մեծապես ազդում են փորձաքննությունների իրականացման ժամկետները և դրանց արդյունքում տրվող եզրակացությունների ոչ հստակ և արժանահավատ լինելը: Բացի մասնավոր

կազմակերպություններից, ներկայումս դատական փորձաքննության բնագավառում գործում են արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև մինչդատական վարույթում փորձագիտական եզրակացություններ են տալիս նաև իրավապահ մարմինների համակարգում գործող փորձագետները: Փորձագիտական կարողությունների այսպիսի բաշխումը առաջ է բերել մի իրավիճակ, որ այդ փորձագիտական հաստատությունները չունեն միասնական տեխնիկական ապահովվածություն, փորձագետների աշխատանքի մշակված ընդհանուր մեթոդաբանություն, ինչպես նաև բազմաթիվ են դեպքերը, երբ կատարվող փորձաքննությունների արդյունքները և կիրառված մեթոդաբանությունը էականորեն տարբերվում են միմյանցից:

Մատնանշված խնդիրները լուծելու նպատակով նախատեսվում է փորձաքննություն կատարող հաստատությունները, որոնք հիմնադրվել են պետության կողմից և գործում են այս կամ այն պետական մարմնի կամ հաստատության ենթակայությամբ, միավորել մեկ միասնական փորձագիտական հաստատության մեջ, որը ապահովված կլինի անհրաժեշտ փորձագիտական ներուժով: Պետք է աշխատանքներ կատարել այդ հաստատությանը նորագույն փորձագիտական սարքավորումներով ապահովելու, փորձաքննությունների կոնկրետ տեսակների համար միասնական մեթոդաբանություն մշակելու, այդ ոլորտի նորմատիվ կարգավորումները շտկելու համար: Միասնական փորձագիտական հաստատությունը պետք է լինի փորձագիտական այն հենքը, որի շնորհիվ պետք է էականորեն բարելավվեն մինչդատական վարույթում և դատական քննության ընթացքում փորձաքննության իրականացման արդյունքները և ժամկետները: Դատափորձագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է նաև մշակել «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծ, որը պետք է կանոնակարգի դատափորձագիտական հաստատությունների և դատական փորձագետների իրավական կարգավիճակը, դատափորձագիտական գործունեության հետ կապված իրավական և կազմակերպչական հարցերը, որոնք գործող օրենսդրությամբ թերի են կարգավորված, իսկ առանձին հարցեր առհասարակ կարգավորված չեն: Ընդ որում նույն հաստատությանը կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջով դիմելու դեպքում կրկնակի փորձաքննության իրականացումը կարող է հանձնարարվել տվյալ հաստատության այլ փորձագետին՝ երաշխավորելով կրկնակի փորձաքննության իրականացման գործընթացի անաչառությունը և անկողմնակալությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Իրավապահ համակարգի բարեփոխում

Ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացման հանձնառությունը հավասարապես վերաբերելի է նաև իրավապահ համակարգին: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջացել իրավապահ համակարգը համապատասխանեցնել պետական մարմինների հանրային հաշվետվողականության և գործունեության թափանցիկության սկզբունքներին: Բացի այդ, իրավապահ մարմինները պետք է կարողությունների զարգացման ծրագրեր անցնեն մի շարք ուղղություններով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատախազության համակարգի բարեփոխում

Դատախազական համակարգի բարեփոխումները առաջին հերթին պայմանավորված են այդ համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման անհրաժեշտությամբ: Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» համատեղ ծրագրի շրջանակում կազմված զեկույցում⁴¹ փաստվել է, որ դատարանից օգտվողների բավարարվածությունը դատախազների մասնագիտական գործունեությունից բարձր չէ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է բարձրացնել դատախազների ներքին անկախությունը՝ հատկապես քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունման հարցում:

Դատախազության համակարգի բարեփոխման նպատակների իրագործման համար անհրաժեշտ է՝

ա) գնահատել դատախազների բարեվարքությունը՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները. մասնավորապես դատախազների բարեվարքության գնահատումն իրականացվելու է էթիկայի հանձնաժողովի կողմից, որի կազմավորման կարգը նախատեսվում է փոփոխել.

բ) իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ՝ պայմանավորված կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով նոր ստորաբաժանում հիմնելու անհրաժեշտությամբ, և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում.

⁴¹ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.coe.int/en/web/cdcj/-/analysis-of-the-results-of-court-users-satisfaction-survey-of-all-courts-of-all-instances-of-armenia>, էջ 159:

գ) սահմանել, որ ԱԺ մշտական հանձնաժողովի կողմից գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության գործընթացին անկախ փորձագետների ներգրավումը լինի պարտադիր (ում կարծիքն ունենալու է խորհրդատվական նշանակություն)։

ե) փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի մասնակցությունը չներառող գործընթացով, ինչպես նաև նվազեցնել գլխավոր դատախազի դերը Էթիկայի հանձնաժողովի կազմավորման հարցում։

զ) ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում, այդ թվում՝ Էթիկայի հանձնաժողովում։

է) զարգացնել դատախազների կարողությունները՝ կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում։

ը) բարձրացնել դատախազների աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, ինչպես նաև ավելացնել դատախազների թվակազմը։

Քննչական մարմինների համակարգի բարեփոխում

Արդարադատության համակարգի առողջացման նպատակով կարևոր է ապահովել, որպեսզի քննչական մարմինները, իրենց կառուցվածքով, գործունեության սկզբունքներով և մասնագիտական ներուժով համապատասխանեն արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին։ Քննչական մարմինների համակարգի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է՝

ա) կառուցվածքային փոփոխություններ կատարել քննչական մարմինների համակարգում՝ ստեղծելով Հակակոռուպցիոն կոմիտե, որը զբաղվելու է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությամբ⁴²,

բ) գնահատել քննիչների բարեվարքությունը՝ գործի դնելով դատավորների և դատախազների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները։

գ) վերանայել քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը՝ դրանց ամբողջականությունը և թափանցիկությունն ապահովելու նպատակով։

դ) զարգացնել քննիչների կարողությունները՝ կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում։

ե) բարձրացնել քննիչների աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, ինչպես նաև ավելացնել քննիչների թվակազմը։⁴³

⁴² Ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը։

⁴³ Դատական և իրավական բարեփոխումների առաջիկա փուլում նախատեսվում է նաև հետաքննիչների աշխատավարձի բարձրացում։

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Քրեական և քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում

Քրեական օրենսդրության բարեփոխում

ՀՀ գործող քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվականին, որից հետո դրա նորմերի գիտական վերլուծությունը և կիրառման պրակտիկան բացահայտել են օրենսգրքում առկա բազմաթիվ թերություններ: Մինչ այժմ քրեական օրենսգրքում արդեն հարյուրից ավելի փոփոխություն ու լրացում է կատարվել: Սակայն, այդ փոփոխությունների նպատակների տարբերությունը, միասնական հայեցակարգային մոտեցման բացակայությունը և կրիմինալոգիական հիմնավորվածության անտեսումը որոշ դեպքերում հանգեցրել են օրենսգրքում առկա հակասությունների ու թերությունների խորացմանը: Նման պայմաններում անհրաժեշտություն է առաջել մշակել նոր քրեական օրենսգիրք, որը պետք է վերացնի վերոնշյալ թերությունները և ծառայի հետևյալ նպատակներին՝

- ստեղծել հանցավորության նվազեցման և քրեական ենթամշակույթի վերացման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքեր,
- ամրագրել հանցավոր արարքները ոչ հանցավորներից սահմանազատելու հստակ հատկանիշներ, որոնք կբացառեն օրենքի տարածական մեկնաբանությունը,
- սահմանել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն,
- կատարելագործել պատժի համակարգը,
- ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև Սահմանադրությանը:

Քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքն ընդունվել է 1998 թվականին, և դրա կիրառման ավելի քան քսան տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցած մի շարք իրադարձությունները, որդեգրված իրավական քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ գործող միջազգային դատարանների և մարդու իրավունքների բնագավառի այլ միջազգային ատյանների, ինչպես նաև Հայաստանի բարձր դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումները անխուսափելի փոփոխություններ են ենթադրում քրեական գործերի քննության և լուծման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող հիմնական իրավական ակտում: Մասնավորապես, քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունն ընդգծել է Եվրոպայի

Խորհրդի նախարարների կոմիտեն՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի և հարակից գործերով վճիռների կատարման վերաբերյալ դիրքորոշման մեջ⁴⁴:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեական ենթամշակույթի վերացում

Քրեական ենթամշակույթը լուրջ մարտահրավեր է հասարակության համար, քանի որ այն սպառնում է խաթարել կամ աղավաղել հասարակության մեջ ձևավորված արժեքներն ու պատկերացումները: Այդ իսկ պատճառով քրեական ենթամշակույթի դեմ պայքարը պետք է լինի յուրաքանչյուր պետության քրեական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը: Ընդ որում, քրեական միջավայրի, դրա կողմից սահմանված ու ճանաչված հատուկ վարքագծի կանոնների տարածման դեմ պետք է դրսևորել համակողմանի մոտեցում, այսինքն՝ պետք է քայլեր ձեռնարկել ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական մակարդակներում: Այս պայմաններում հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքով քրեական միջավայրի չեզոքացման և հետագա հաղթահարման ռազմավարությունը մեր հանրապետությունում դեռևս մշակված չէ: Այս առումով օրենսդրորեն այն ամրագրելու անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության լայն շերտերի շրջանում այն կանխելու միտումով, քանզի պետք է գիտակցել, որ դրա դեմ պայքարը նպաստելու է միջանձնային հարաբերությունների, մարդկանց արժեհամակարգի բարելավմանը, ինչպես նաև վարքագծի կանոնների փոփոխմանը, քանի որ դա հասարակության առողջ զարգացման գրավականն է:

Այլընտրանքային պատժների համակարգի ներդրում

Գործող քրեական օրենսգրքով սահմանված պատժի համակարգի պայմաններում հաճախ դատարանը ազատազրկմանն այլընտրանք չի ունենում: Այստեղից էլ ազատազրկում պատժատեսակի չարդարացված հաճախակի կիրառումը: Բացի այդ, ազատազրկում պատժատեսակի հաճախակի կիրառումը կարող է նպաստել քաղաքացիական հասարակության մեջ քրեական ենթամշակույթի տարածմանը: Դատարանները հաճախ ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, բայց այս ինստիտուտի ոչ հստակ և բացերով ու թերություններով աչքի ընկնող օրենսդրական կարգավորումը չի նպաստում պատժողական քաղաքականության արդյունավետությանը: Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ազատազրկմանը իրական այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկն ընդլայնել և դրանց կիրառման համար արդյունավետ ու գործուն մեխանիզմներ ներդնել: Նախատեսվում է ներդնել հետևյալ նոր այլընտրանքային պատժատեսակները՝ օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը, ազատության սահմանափակումը, կարճաժամկետ ազատազրկումը, ինչպես նաև հանրային աշխատանքները նախատեսել որպես ինքնուրույն կիրառվող պատժատեսակ:

⁴⁴ [https://hudoc.exec.coe.int/eng#{%22EXECIdentifier%22:\[%22004-355%22\]}](https://hudoc.exec.coe.int/eng#{%22EXECIdentifier%22:[%22004-355%22]})

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդնում

Գործող քրեական օրենսգրքի պայմաններում, երբ իրավաբանական անձը չի համարվում քրեաիրավական ներգործության սուբյեկտ, հնարավոր չի լինում ապահովել պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործողությունը մի շարք դեպքերում, երբ քրեական օրենսգրքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին վնաս է պատճառվում հենց ի շահ իրավաբանական անձի, այդ թվում՝ երբ հնարավոր չի լինում նույնականացնել վնասը պատճառած ֆիզիկական անձին կամ վնասի պատճառումը հնարավոր է դառնում տվյալ կազմակերպությունում ներքին վերահսկողության, իր աշխատակիցների կողմից հանցանքների կատարումը կանխարգելելու մեխանիզմների բացակայության պատճառով: Որպես կանոն, իրավաբանական անձանց պատճառած վնասը մի քանի անգամ գերազանցում է ֆիզիկական անձանց պատճառած վնասը, ինչը պետք է համարժեք քրեաիրավական արձագանքի արժանանա: Ուստի քրեական օրենսդրությամբ անհրաժեշտ է ներդնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը:

Այլընտրանքային խափանման միջոցների ներդնում

Տարիներ շարունակ տարբեր տեղական և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից ընդգծվել է այն մտահոգությունը, որ Հայաստանում չարդարացված բարձր է կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման տոկոսը: Խնդիրը պայմանավորված է նաև գործող քրեական դատավարության օրենսգրքում այլընտրանքային արդյունավետ խափանման միջոցների սղությամբ: Ուստի նոր օրենսգրքում այլընտրանքային նոր խափանման միջոցների ներդնումը, ինչպես նաև նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը կնպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը: Նախատեսվում է ներդնել տնային կալանք և վարչական հսկողություն այլընտրանքային խափանման միջոցները:

Համաձայնեցման (plea bargaining) և համագործակցության վարույթներ

Այն դեպքերում, երբ դատավարության կողմերը համաձայնության են գալիս մեղադրյալի մեղավորության հարցում, որոշ կատեգորիաների (նախատեսվում է ինստիտուտը ներդնել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար) հանցագործությունների վերաբերյալ գործերով ապացույցների մանրակրկիտ հետազոտության վրա ռեսուրսներ ծախսելն արդարացված չէ: Այդ դեպքերում դատարանը պետք է պարզապես հաստատի կողմերի միջև կնքված համաձայնության մասին արձանագրությունը: Սա բխում է նաև մրցակցության սկզբունքի լիարժեք իրագործման տրամաբանությունից:

Նույն կերպ, մի շարք երկրներում իր արդյունավետությունն է ապացուցել նաև պաշտպանության և մեղադրական կողմերի միջև համագործակցության ինստիտուտը՝

երկուստեք որոշակի ռազմավարական նպատակներ իրագործելու համար: Մասնավորապես, պաշտպանական կողմի համար պատժաչափի կրճատման, իսկ մեղադրանքի կողմի համար՝ հանցագործության բացահայտման նպատակներով: Ուստի, նկարագրված դեպքերում ռեսուրսներ խնայելու և դատավարական նպատակներին առավել օպտիմալ եղանակներով հասնելու համար ներդրվելու են համաձայնեցման և համագործակցության վարույթները:

Անչափահասների և խոցելի անձանց մասնակցությամբ վարույթների կատարելագործում

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունն անչափահաս տուժողների և վկաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ունի բացթողումներ ու թերություններ, քանի որ երկրի արդարադատության համակարգն ամբողջ չափով հաշվի չի առնում քրեական գործերով անչափահաս տուժողների հատուկ խնդիրների և պահանջների առկայությունը: Այս առումով ՀՀ գործող օրենսդրությունը չի համապատասխանում նաև ոլորտի միջազգային չափանիշներին ու առաջադեմ փորձին, որի պահանջն է քրեական դատավարության օրենսգրքով անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգի սահմանումը, մասնավորապես, հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը բացառելու համար (double victimization): Ուստի նոր օրենսգիրքը պետք է լրացնի անչափահաս տուժողների կամ վկաների մասնակցությամբ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման առանձնահատկություններին վերաբերող բացերը՝ վերջիններիս հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը նվազեցնելու կամ բացառելու նպատակով:

Խնդիրներ կան անչափահաս կասկածյալների և մեղադրյալների իրավունքների պաշտպանության բնագավառում: Մասնավորապես, խնդիրները վերաբերում են այդ թվում այլընտրանքային խափանման միջոցներին, քրեական հետապնդման և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամկետներին, խարանավորման կանխարգելմանը և այլն: Ուստի, նոր օրենսգիրքը պետք է կատարելագործի անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթում՝ այդ թվում ապահովելով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը միայն որպես ծայրահեղ միջոց կիրառելը, քրեական հետապնդման և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամկետների սահմանափակումը, անչափահասի մասնակցությամբ վարույթի գաղտնիությունը և այլն: Ընդհանուր առմամբ, անչափահասի մասնակցությամբ վարույթը պետք է համապատասխանեցվի միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններին (Պեկինյան կանոններ):⁴⁵

⁴⁵ Տե՛ս ավելի մանրամասն <https://www.ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf>

Կատարելագործման կարիք ունեն նաև խոցելի անձանց (սեռական և ընտանիքում բռնության ենթարկված անձանց) արդարադատության մատչելիության ապահովման կառուցակարգերը: Մասնավորապես օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են վերոնշյալ անձանց կրկնակի զոհականացումը կանխելու, նրանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, վարույթի ընթացքում մեղադրյալի հետ առերեսվելը բացառելու, տուժողակենտրոն մոտեցում ապահովելու նպատակով:

Քրեական գործերով իրավական փոխօգնության արդյունավետ կարգավորման նախատեսում

Առանձին օրենքով պետք է կարգավորվեն քրեական գործերով իրավական օգնության իրականացման կարգն ու պայմանները և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ կարգավորում չստացած հարաբերությունները: Այդ կարգավորումները պետք է ընդգրկեն՝

- 1) իրավական օգնության մասին հարցումներ,
- 2) հանձնումը (էքստրադիցիա), այդ թվում՝ ժամանակավոր հանձնումը,
- 3) համագործակցության այլ տեսակներ (այդ թվում՝ քրեական վարույթի փոխանցումը, դատապարտյալների փոխանցումը, պայմանական դատապարտված կամ պայմանական վաղաժամկետ ազատված անձի նկատմամբ հսկողություն իրականացնելը, օտարերկրյա պետության կայացրած դատավճռի ճանաչումը, փոխարկումը և կատարումը),
- 4) և այլն:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում

Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մոդելային օրենսգրքի հիման վրա: Սակայն օրենսգրքի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության իրավական և սոցիալ-տնտեսական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների և քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդյունքում օրենսգրքում առաջացել են կարգավորման բազմաթիվ բացեր, առանձին իրավական ինստիտուտներ այլևս չեն համապատասխանում շուկայական զարգացման արդի միտումներին, առկա են տերմինաբանական բազմաթիվ անճշտություններ:

2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունմամբ բարեփոխվեց քաղաքացիական արդարադատությունը, ներդրվեցին մի շարք նոր ինստիտուտներ, որոնք ուղղված էին դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ու գործի քննության

արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, նոր կարգավորումները ևս ունեն մի շարք խնդիրներ, որոնք անհրաժեշտ է վեր հանել և փոփոխել:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական օրենսդրության բարեփոխում

Վերոգրյալի հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը անհրաժեշտ է համապատասխանեցնել մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման ժամանակակից մոտեցումներին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ, մասնավորապես՝

1. պետք է անդրադարձ կատարել քաղաքացիական իրավունքի օբյեկտների շրջանակին՝ դրանում հստակեցնելով ոչ թղթային արժեթղթերի, էլեկտրոնային փողի, կրիպտոակտիվների կարգավիճակը,

2. ենթակա են վերանայման պայմանագրային իրավունքի, այդ թվում՝ պայմանագրերի ձևին վերաբերող կարգավորումները՝ հաշվի առնելով ժամանակակից էլեկտրոնային գործիքների տարածվածությունը և կիրառման արդյունավետությունը: Այս առումով, չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է կարգավորումներ էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով պայմանագրերի կնքման վերաբերյալ, սակայն դրանում չեն ներառվում այն դեպքերը, երբ էլեկտրոնային պայմանագիրը կնքվում է առցանց տիրույթում (էլեկտրոնային հարթակներում)՝ համապատասխան տվյալների ներբեռնմամբ և պայմանագրի պայմաններին (terms and conditions) միանալու միջոցով կամ տարատեսակ հավելվածների (applications) միջոցով:

3. Ժամանակակից զարգացումներից հետ են մնում նաև կորպորատիվ իրավունքին վերաբերող իրավակարգավորումները, հատկապես՝ շուկայական հարաբերություններին ոչ համահունչ կազմակերպարավական ձևերի առկայության պայմաններում: Խոսքը հատկապես վերաբերում է տնտեսական ընկերակցություններին, որոնց վերաբերյալ կարգավորումները գործնականում չեն կիրառվում: Բացի այդ, վերանայման ենթակա են նաև կորպորատիվ իրավահարաբերություններ կարգավորող մյուս օրենսդրական ակտերը՝ «Սահմանափակ պատասխանատվության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին»՝ դրանցում կորպորատիվ կառավարման ժամանակակից լուծումներին համապարփակ անդրադարձ կատարելու համար:

4. Անհրաժեշտ է վերանայել գնումների մասին օրենսդրության և քաղաքացիական իրավունքի հարաբերակցության հարցը: Այս առումով խնդրահարույց է այն, որ գնումների վերաբերյալ օրենսդրությունը ձևավորված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պետական կարիքների համար մատակարարման պայմանագրի համապատասխան նորմերի հիմքի վրա:

5. Պետք է վերանայել պայմանագրերի առանձին տեսակները կարգավորող իրավական նորմերը: Խոսքը վերաբերում է հատկապես բանկային և ապահովագրական

ուղորտը կարգավորող նորմերին և զարգացող հարաբերություններին համահունչ՝ առկա է համապատասխան ինստիտուտների վերանայման անհրաժեշտությունը: Միաժամանակ անհրաժեշտ է վերացնել բոլոր հակասությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուղորտները կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված հատուկ նորմերի հետ:

6. 2014թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ներդրվեց ապահովված իրավունքի ինստիտուտը, սակայն ոչ բավարար հստակությամբ լուծվեց ապահովված իրավունքի և գրավի ինստիտուտների հարաբերակցության հարցը, ինչը ինքնին ազդում է ապահովված իրավունքի կիրառման արդյունավետության վրա: Ուստի անհրաժեշտ է անդրադարձ կատարել երկու ինստիտուտների հստակ տարանջատման, դրանց կիրառման առանձնահատկությունների սահմանման հարցերին:

7. Վերանայման ենթակա է նաև վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների հետ կապված իրավակարգավորումները՝ անչափահասների, շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի, կյանքին և առողջությանը պատճառած վնասի վերաբերյալ նորմերը:

8. Բացի Քաղաքացիական օրենսգրքի փոփոխություններից, անհրաժեշտ է անդրադառնալ նաև ոլորտային օրենքների բարեփոխմանը, ինչպես օրինակ՝ ֆինանսական ոլորտի օրենսդրությանը՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարակով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և այլն:

Քաղաքացիական դատավարությունում հայցադիմումը վերադարձնելու ինստիտուտի վերանայում

Հարկ է վերանայել հայցադիմումը դատավորի կողմից անվերապահ բոլոր հիմքերով վերադարձնելու գործընթացը և սահմանել որոշ զուտ օրենսդրական ակնհայտ պահանջների խախտմամբ ներկայացված հայցերը դատարանի գրասենյակի կողմից վերադարձնելու իրավական հնարավորություն: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից վերջին երեք տարիների ընթացքում կայացվել է հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու մասին 20 244 որոշում⁴⁶: Հետևաբար՝ նկատի ունենալով, որ այս գործառույթի իրականացումն հիմնականում նպատակ է հետապնդում պարզելու հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանված լինելը, ուստի առաջարկվում է համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման միջոցով այս գործառույթի իրականացումը վերապահել դատարանի գրասենյակին:

⁴⁶ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. տարեկան հաղորդումը՝ http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf

Քաղաքացիական դատավարությունում պարտադիր հաշտարարության դեպքերի սահմանում

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված անվճար հաշտարարություն նշանակելու իրավական լուծումները՝ դիտարկել որոշակի իրավահարաբերությունների (ընտանեկան, աշխատանքային, բանկային և այլն) վերաբերյալ վեճերով դատարանի կողմից անվճար հաշտարարություն նշանակելը պարտադիր դարձնելու իրավական հնարավորությունը:

Քաղաքացիական դատավարության իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների գույքագրման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծում

2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում արձանագրված կարգավորումները առաջացրել են տարբեր խնդիրներ, օրինակ որոշ վարույթների համար, ինչպես օրինակ՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործի վարույթի, Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործի, պաշտպանական որոշման վերաբերյալ վարույթներով նախատեսված են գործի քննության սեղմ ժամկետներով 10 օրից մեկ ամիս, որոնք գործնականում պահպանելը անհնար է դառնում:

Ուստի անհրաժեշտ է գույքագրել պրակտիկայում նոր ինստիտուտների և նոր կարգավորումների կիրառման արդյունքում ծագած խնդիրները և լուծել դրանք:

Էլեկտրոնային եղանակով ծանուցումների իրականացման անհրաժեշտ գործիքակազմի ներդրում

Էլեկտրոնային եղանակով դատական ծանուցումների իրականացումը դատավարության արդյունավետության և սեղմ ժամկետներում գործի քննության ապահովման կարևորագույն նախադրյալներից է: Այդ իսկ պատճառով ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված է դատական ծանուցումների էլեկտրոնային կարգ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ, փաստաբանի և գործին մասնակցող այն անձանց համար, ովքեր միջնորդել են իրենց էլեկտրոնային կարգով ծանուցելու համար:

Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նման կարգ նախատեսված չէ, որպիսի պայմաններում դատական ծանուցագրերը շարունակվում են ուղարկել փոստի միջոցով: Հետևաբար, այս առումով անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

Հատկանշական է, որ դատավարական օրենսգրքերը չեն նախատեսում դատական ակտերը գործին մասնակցող անձանց էլեկտրոնային կարգով ուղարկելու ընթացակարգ,

և նման դեպքում դատավարության ընթացքում կայացվող բոլոր ակտերը նրանց ուղարկվում են փոստի միջոցով:

Ըստ այդմ, անհրաժեշտ է դատավարական օրենսգրքերով նախատեսել պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ, փաստաբանի, իսկ գործին մասնակցող անձի դեպքում վերջինիս կամահայտնության պարագայում դատարանի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված ցանկացած ակտ դատավարության մասնակցի կողմից դատարանին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու կարգավորումներ:

Դատավարական փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու անհրաժեշտ կառուցակարգերի ներդնումը

ՀՀ քաղաքացիական և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, հայցադիմումի պատասխան, միջնորդություն և այլն) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն է ընձեռված: Ընդ որում, նշված կարգավորումների համաձայն դատավարական փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Այդուհանդերձ, նման կարգ դեռևս Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված չէ, ինչպես նաև առկա չեն այդ փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու տեխնիկական կառուցակարգեր:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է ապահովել դատավարական փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ներդնումը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում

Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վարչական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում թերևս, «ամենաերիտասարդ» իրավական ինստիտուտներից է: Իրավունքի այս ճյուղի գոյության շուրջ 11 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունվեցին վարչական դատավարության երկու օրենսգրքեր:

2013 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կիրառման ընթացքում ծագած խնդիրների լուծման համար ընդունվեցին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքներ: Այդուհանդերձ, նշված

միջոցառումների իրականացման պայմաններում վարչական դատարանը շարունակում է մնալ ծանրաբեռնված, բացակայում են վարչական գործը առավել սեղմ ժամկետում և արդյունավետ քննելուն ուղղված կառուցակարգերը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծում

Վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսևորումը:

Բացի այդ, մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Օրենսդրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող և լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետևաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է և զրկվում արդյունավետությունից:

Հետևաբար, անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով ստեղծել Վճռաբեկ դատարանի վարչական պալատ:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարույթի ենթակայության և գործի քննության ընթացակարգի հստակեցում

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ վարչական դատարանին ընդդատյա չեն, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը: Այդուհանդերձ, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը 22.01.2019թ. թիվ ՍԴՈ-1439 որոշմամբ արձանագրել է, որ մինչև Ազգային ժողովի կողմից այդ որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի

համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին:

Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել նման գործերի քննության ընթացակարգային առանձնահատկությունները:

Հետևաբար՝ անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարույթի ենթակայության և գործի քննության ընթացակարգի հստակեցում:

Վարչական դատավարությունում ծանուցման ընթացակարգերի բարելավում

Վարչական դատավարությունում ծանուցումների գործող համակարգի պարագայում դատարանը պարտավոր է յուրաքանչյուր գործով յուրաքանչյուր դատավարական գործողության մասին հիմնականում փոստի միջոցով ծանուցել դատավարության մասնակցին: Ընդ որում, որևէ տարբերակում չի դրվում, թե դատավարության մասնակիցը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, փաստաբան է, թե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Բոլոր դեպքերում, դատարանը փաստացի մեծ չափերի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ է ծախսում օրենսդրության պահանջը կատարելու համար /միայն Երևանում այն անցնում է 400 միլիոն դրամից/:

Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված դատական ծանուցումների համակարգը զգալիորեն նվազեցրեց դատարանների ծանրաբեռնվածությունը և ծախսվող միջոցների չափը, մասնավորապես պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ, ինչպես նաև գործին մասնակցող անձի՝ փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուցչի կողմից առաջին դատական ծանուցագիրը ստանալու պահից, նրանք հերթական դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցվում են դատական իշխանության պաշտոնական կայքում համապատասխան տեղեկությունները տեղադրելու միջոցով:

Հետևաբար, անհրաժեշտ է նմանատիպ կարգավորումներ նախատեսել նաև վարչական դատավարությունում:

Գրավոր և պարզեցված ընթացակարգերի կիրառումը վարչական դատավարությունում

Ներկայումս վարչական դատավարությունում դատաքննության փուլը կարող է անցկացվել գրավոր միայն դատավարության մասնակիցների համաձայնության դեպքում, մինչդեռ կոնկրետ դեպքերում գրավոր ընթացակարգերի պարտադիր կիրառություն սահմանելը կհանգեցնի դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վերաքննության և վճռաբեկության փուլերի համար, որպես կանոն, գրավոր ընթացակարգի նախատեսումը ոչ միայն նվազեցրել է այդ դատարանների ծանրաբեռնվածությունը, այլև խթանել է այդ

ատյաններում գործի ողջամիտ ժամկետում քննության պահպանմանը, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վերաքննության և վճռաբեկության փուլերում գրավոր ընթացակարգի կիրառում նախատեսված չէ:

Հետևաբար, անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով գրավոր ընթացակարգերը ներդնել նաև վարչական դատավարությունում:

Միաժամանակ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, վարչական դատավարությունում պարզեցված վարույթով գործը քննելու հնարավորություն նախատեսված չէ: Պարզեցված վարույթը ենթադրում է վարչական գործի քննության ընդհանուր կանոնների և պարզեցված վարույթի կարգին բնորոշ հատուկ կանոնների համադրմամբ գործի քննության պարզեցված՝ հիմնականում առանց դատական նիստերի հրավիրման ընթացակարգ: Նպատակը առանձին գործերի քննությունն ավելորդ դատավարական փուլերով չծանրաբեռնելու միջոցով դատավարական խնայողության սկզբունքի կենսագործումն է:

Պարզեցված վարույթները վարչական դատավարությունում ներդնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նախևառաջ այն հանգամանքով, որ վարչական դատարանում չափազանց մեծ քանակով վիճարկվում են Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքների վերաբերյալ որոշումները, որոնցով նախատեսված տուգանքի չափը չի գերազանցում 5.000 ՀՀ դրամը: Պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ վարչական գործերը հարուցվում են գլխավորապես ֆիզիկական անձանց կողմից (91.5%) ընդդեմ ՀՀ ճանապարհային ոստիկանության:

Վերոգրյալից բխում է, որ նմանատիպ գործերի համար, հաշվի առնելով վարչական տույժի չափը, անհրաժեշտ է սահմանել բացառապես պարզեցված ընթացակարգ:

Վարչական դատավարությունում բողոքարկման սահմանափակումների ամրագրումը

Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն ուղղված գործուն միջոց կարող են հանդիսանալ ինչպես վարչական դատարանի մատչելիության, այնպես էլ վարչական դատարանի վճիռների բողոքարկման իրավունքի համաչափ սահմանափակմանն ուղղված միջոցառումները:

Անդրադառնալով վերադաս (վերաքննիչ և վճռաբեկ) դատարանների մատչելիությանը՝ ՄԻԵԴ Մեծ Պալատը նշել է, որ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության եղանակը կախված է տվյալ դատավարության առանձնահատկություններից և ներպետական մակարդակում գործի քննությունը պետք է հաշվի առնվի իր ամբողջության մեջ: Հաշվի առնելով ինչպես ՀՀ սահմանադրական դատարանի, այնպես էլ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները՝ հնարավոր է սահմանափակել ՀՀ վարչական դատարանի այն գործերով վճիռները բողոքարկելու հնարավորությունը, որոնցով վիճարկվող վարչական ակտերով կիրառված տույժի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի կրկնապատիկը:

Պետական տուրքի հետ կապված կարգավորումների վերանայումը

Վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման միջոց է հանդիսանում հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրքից ազատված լինելու վերաբերյալ կարգավորումների վերանայումը:

Հատկանշական է, որ ներկայումս անձինք ազատված են հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականությունից: Իսկ դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ նույնիսկ երբ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր չէ պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով:

Ստացվում է, որ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը կազմող գրեթե բոլոր գործերով հայցվորները ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից: Ըստ այդմ, անհրաժեշտ է սահմանել պետական տուրք վճարելու պարտականություն, իսկ պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի համար սահմանել հստակ հիմքեր, որը կկիրառվի միայն դատարանի որոշմամբ:

Վարչական դատավարության հատուկ վարույթների արդյունավետության բարձրացումը

ՀՀ վարչական դատավարության հատուկ վարույթների շարքին է դասվել դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը, ինչն անհրաժեշտ է հանել օրենսգրքից, քանի որ այն հանդիսանում է վարչական մարմնի գործառույթ:

Ներկայումս վարչական դատավարության օրենսգրքում առանձնացվել են վարույթներ, որոնց հատուկ վարույթի կարգով քննելու անհրաժեշտությունը հիմնավորված չէ: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունների ներկայացրած հայցերով, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ, նոտարի գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերով ներկայացվում են վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներ և գործի քննության որևէ առանձնահատկություն այս գործերով անհրաժեշտ չէ կիրառել: Ավելին, այս գործերը չեն կարող համարվել հատուկ վարույթներ, քանի որ դրանցում առկա են հակադիր շահերով օժտված կողմեր և նյութաիրավական պահանջներ:

Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել վարչական դատավարությունում հատուկ վարույթները:

Վարչական վարույթի արդյունավետության բարձրացում

Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածը նախատեսում է վարչական մարմին հանդիսացող մարմինների շրջանակը, սակայն դրանցում ներառված չեն հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունները: Մինչդեռ, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այդ կազմակերպությունների գործունեության արդյունքում կայացվող ակտերի՝ վարչարարության հետևանք հանդիսանալը, և այդ կազմակերպություններին վարչական մարմինների շարքում ընդգրկելը: Այդպիսով, հնարավորություն տալով անձանց վարչական դատավարության կարգով վիճարկելու հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների գործողությունները:

Բացի այդ, հարկ է նշել, որ Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների ուսումնասիրությունից բխում է, որ անձը սահմանափակված է հստակ պայմանների առկայության դեպքում միայն վարչական դատարան դիմելու: Մասնավորապես, վարչական հայց ներկայացնելու իրավունքի իրացումը առկախված է վարչական կամ ռեալ ակտի գոյության հետ: Մինչդեռ, կարող են լինել դեպքեր, երբ ռեալ կամ վարչական ակտ դեռևս չի ընդունվել, սակայն վարչական վարույթի ընթացքում իրականացվող գործողությունները ոչ իրավաչափ են և հանգեցնում են անձի իրավունքների խախտման: Նման դեպքերում անհրաժեշտ է դիտարկել վարչական վարույթի ընթացիկ փուլում վարչական մարմնի վերոնշյալ գործողությունների վիճարկման հնարավորության նախատեսումը:

Վարչական կարգով վարչական ակտերի բողոքարկման արդյունավետության բարձրացումը

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորումը պահանջում է վարչական վարույթի և մասնավորապես վարչական ակտերի բողոքարկման ընթացակարգերի կատարելագործում:

Վարչական ակտերի բողոքարկման արդյունավետության բարձրացման և պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորման տեսանկյունից կարևորվում է բողոքարկման գործընթացում մասնագիտական և այլ ռեսուրսների կենտրոնացումը և արդյունավետ օգտագործումը, վարչական ակտերի վերանայման ընթացակարգերում անաչառության և հարցի օբյեկտիվ քննության երաշխիքների ապահովումը:

Այս համատեքստում անհրաժեշտ է նախատեսել վարչական ակտերի բողոքարկման գործուն մեխանիզմներ: Ընդ որում, ի թիվս այդ մեխանիզմների անհրաժեշտ է, Սահմանադրությամբ նախատեսված մարմինների շրջանակներում, քննարկման առարկա

դարձնել վարչական վերանայման միասնական մարմնի ստեղծման նպատակահարմարությունը, որն իրավասու կլինի քննել հնարավորինս բոլոր գործերով ներկայացված վարչական բողոքները: Տվյալ վարչական մարմնում կարող են քննվել որոշակի կատեգորիայի գործերը, որոնք ներկայումս ունեն վերադասության կարգով բողոքարկման հնարավորություն, այդ գործերով մասնագիտացում ունեցող անձանց կողմից: Ընդ որում, այդ անձինք պարբերաբար, օրինակ 2 տարին մեկ անգամ, կարող են ենթարկվել ռոտացիայի:

Ավելին, օրենքով կարող են նախատեսվել վարչական ակտը վարչական մարմնում պարտադիր բողոքարկելու մեխանիզմներ: Նման փոփոխությունների միջոցով կնվազեցվի վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը և կապահովվի վարչական բողոքարկման մասնագիտացված համակարգի իրացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործում

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված և 1986թ. հունիսի 6-ին կիրառության մեջ դրված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը: Այդ օրենսգիրքն իր հիմքում դրված հայեցակարգային տրամաբանությամբ և փիլիսոփայությամբ, համակարգային կառուցվածքով և տասնյակ այլ օրենքների հետ ունեցած անլուծելի հակասություններով, տասնամյակների ընթացքում կատարված բազում հաջողված և անհաջող փոփոխություններով, հնացած կամ գործնական կիրառում չունեցող բազմաթիվ դրույթներով, թերի և ոչ լիարժեք վարչական պատասխանատվության միջոցներով ունակ չէ լուծել իր առջև դրված խնդիրները և չի համապատասխանում իրավական պետության պահանջներին:

Ավելին, վերջին տարիներին մշակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ, որն ընդունելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:

Հաշվի առնելով այն, որ վարչական իրավախախտումների ոլորտում խնդիրները բավականաչափ ծավալուն են և համակարգային, անհրաժեշտ է ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք, որը հարիր կլինի իրավական պետության արդի պահանջներին:

Վարչական իրավախախտումների համար նախատեսված տույժերի վերանայում

Ռազմավարության նպատակներից է նաև վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող օրենսդրական կարգավորումների վերանայումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս կարգավորումները չեն արտացոլում վարչական ներգործության նպատակները: Վարչական տույժը պետք է կիրառվի անձի մոտ իրավաչափ վարքագիծ ձևավորելու և նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով: Մինչդեռ, շատ հաճախ

սահմանված տույժերի կիրառմամբ չի ապահովվում վարչական տույժի նպատակների իրացումը:

Բացի այդ, վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորումներ, որոնք պատասխանատվության ենթարկող իրավասու մարմինն հնարավորություն կընձեռեն որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից: Ըստ այդմ, համաչափության սկզբունքի տեսանկյունից ևս անհրաժեշտ է վերանայել վարչական տույժերը:

:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որդեգրել նոր մոտեցում, որի համաձայն տուգանքի չափերը կփոփոխվեն և տուգանքից բացի, որպես վարչական տույժ կսահմանվի նաև տուգանային միավորը, որոնց կիրառման արդյունքում օրինախախտ անձանց համար կառաջանա այլ հետևանք, քան գույքային պատասխանատվությունն է, օրինակ՝ վարորդները, կարող են ընդհուպ զրկվել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից որոշակի ժամկետով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Սնանկության ոլորտի բարեփոխումներ

Սնանկության ոլորտում շարունակական բարեփոխումների իրականացումը կարևորվում է ոչ միայն արդարադատության համակարգի, այլ նաև գործարար միջավայրի բարելավման անհրաժեշտությունից ելնելով: Չնայած սնանկության ոլորտում տարբեր տարիներին կատարված բարեփոխումներին, այնուամենայնիվ, այն պահանջում է շարունակական բարելավումների իրականացում՝ համաշխարհային միտումներին և զարգացող տնտեսական հարաբերություններին համահունչ:

Սնանկության ոլորտում բարեփոխումները պետք է կատարվեն՝ ապահովելու համար հեշտ և կանխատեսելի հասանելիությունը սնանկության վարույթներին, լուծարման և առողջացման ինստիտուտների հստակ տարանջատումը, սնանկության գործերի արդյունավետ, պատշաճ և ժամանակին լուծումը:

Այս առումով էլ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրի⁴⁷ շրջանակներում Արդարադատության

⁴⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>

նախարարության կողմից մշակվել, հանրային քննարկումների ձևաչափով համաձայնեցվել և Ազգային ժողով են ներկայացվել «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որոնցով ամրագրված իրավակարգավորումները արդեն իսկ կարևոր քայլեր են հանդիսանում սնանկության ոլորտի բարեփոխման տեսանկյունից, մասնավորապես՝ իրավական հիմքեր են ստեղծվել սնանկության կառավարիչների մասնագիտական ուսուցումը և արհեստավարժությունն ապահովելու համար, սահմանվել են իրավակարգավորումներ սնանկության կառավարիչների հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ, վերանայվել է սնանկության կառավարիչների կարգապահական պատասխանատվության ինստիտուտը, հիմքեր են ստեղծվել սնանկության վարույթին մասնագիտացված կազմակերպությունների ներգրավվածության բարձրացման ուղղությամբ, նախատեսվել են էլեկտրոնային սնանկության համակարգին առջնվորդ կարգավորումներ, սահմանվել է սնանկության կառավարիչների վարձատրության (պարգևավճարների) ճկուն համակարգ՝ սեղմ ժամկետներում վարույթի ավարտման և ֆինանսական առողջացման դեպքերում, նախատեսվել են կարգավորումներ սնանկության վարույթին մասնակից երրորդ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սնանկության ոլորտի բարեփոխումների շրջանակներում սույն ռազմավարությամբ նախանշվել մի շարք ուղղություններ, որոնք ոչ միայն կապահովեն վերոնշյալ բարեփոխումների շարունակականությունը և ոլորտի հետագա զարգացումը, այլ նաև կնպաստեն արդեն իսկ կատարված կամ առաջիկայում կատարվելիք բարեփոխումների գործնական կիրառելիությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սնանկության կառավարիչների մասնագիտական պատրաստվածության բարձրացում, կարողությունների զարգացում

Ներկայում սնանկության կառավարիչները պարտավոր չեն ունենալ իրենց աշխատանքի հետ կապված բարձրագույն կրթություն, գիտական աստիճան կամ փորձ, բավարար է ցանկացած մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունենալը և որակավորման քննություն հանձնելը: Մասնագիտության շարունակական զարգացումը մոնիթորինգի չի ենթարկվում և չի համապատասխանում Հայաստանում առկա կոնկրետ խնդիրներին:

Այս առումով անհրաժեշտ է վերանայել սնանկության կառավարիչների որակավորման ընթացակարգը, մշակել և ներդնել կառավարիչների մասնագիտական ուսուցման կրթական ծրագրեր և դրանց հիման վրա կազմակերպել կառավարիչների թեկնածուների ուսուցում՝ նախքան որակավորում անցնելը: Սա անհրաժեշտ պայման կհանդիսանա, որ կառավարիչների որակավորմանը մասնակցեն միայն բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող թեկնածուներ:

Բացի այդ, սնանկության կառավարչի մասնագիտություն ձեռք բերելու համար էական նշանակություն ունի մասնագիտական գրականության աղբյուրների առկայությունը: Այս առումով անհրաժեշտ է մշակել սնանկության ոլորտի համապարփակ փաստաթղթեր՝ «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական մեկնաբանություններ՝ ըստ հոդվածների, ձեռնարկներ և ուղեցույցներ, որոնք կներառեն սնանկության վերաբերյալ օրենսդրության և սնանկության վարույթի ողջ վերլուծությունը և կներկայացնեն օրենքի մատչելի մեկնաբանություններ՝ հաշվի առնելով դատական պրակտիկան և դատավարագիտական մոտեցումները, վարույթի առանձնահատկությունները և գործնական խնդիրները: Արդյունքում շահագրգիռ անձինք կունենան վստահելի աղբյուրներ՝ սնանկության վարույթի վերաբերյալ գիտելիքներ ձեռքբերելու և ծագած գործնական խնդիրներին լուծում տալու համար:

Մյուս կողմից, սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունները, համագործակցելով Արդարադատության նախարարության հետ, պետք է բարելավեն սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը՝ ապահովելով ուսումնական նյութերի արդիականությունը, բազմազանությունը և որակը:

Սնանկության կառավարիչների նշանակման և փոխարինման կարգի վերանայում

Սնանկության կառավարիչների ընտրության ներկայիս համակարգը արդյունավետ չէ: Խնդիրն այն է, որ առկա կարգավորումների հիման վրա ձևավորվել է պրակտիկա, որի համաձայն՝ առանձին կառավարիչների մոտ, ի հաշիվ հանձնվող գործերի քանակի և բնույթի, դիտարկվում է անհամեմատ մեծ վարձրատրություն՝ ի տարբերություն մյուս կառավարիչների: Այս առումով անհրաժեշտ է վերանայել սնանկության կառավարիչների նշանակման համակարգը, ներդնել կառավարիչների ընտրության նոր համակարգչային ծրագիր, որը կառավարչի ընտրության հարցում պետք է հաշվի առնի մի շարք գործոններ (գործերի բարդություն, կառավարչի մասնագիտական հմտություններ, գործունեության տարածք)՝ երաշխավորելով սնանկության գործերի արդարացի բաշխումը սնանկության կառավարիչների միջև, մեծացնել պարտատերերի դերը և ազդեցությունը սնանկության կառավարիչների նշանակման հարցում:

Միաժամանակ, սնանկության կառավարիչների նկատմամբ հնարավոր ազդեցությունը բացառելու համար հետագա բարեփոխումների շրջանակներում պետք է ապահովել սնանկության կառավարիչների անկախությունը՝ նրանց պատասխանատվության և լիազորությունների դադարեցման հստակ հիմքերի ամրագրմամբ՝ նվազեցնելով ներկայիս կարգավորումներում առկա դատական լայն հայեցողությունը:

Պարտապանի գույքի գույքագրման, գնահատման և աճուրդի գործընթացի հստակեցում

Ներկայում սնանկության կառավարչի կողմից պարտապանի գույքի գույքագրման և գնահատման գործընթացները համապարփակ կարգավորված չեն, ինչը սնանկության կառավարչին տալիս է լայն հայեցողություն դրսևորելու հնարավորություն: Այս առումով

անհրաժեշտ է մշակել գույքագրման և գնահատման հստակ չափանիշներ, պարզ և հստակ ընթացակարգեր, մշակել գույքի հայտարարագրման ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ՝ արտաքին մարմնի (օրինակ՝ Արդարադատության նախարարություն) կողմից աուդիտի (ընտրովի ստուգումներ) իրականացման ձևով: Բացի այդ, անհրաժեշտ է նաև ներդնել գույքը գնահատող անձի ընտրության հատուկ ընթացակարգ՝ դատարանի ներգրավմամբ:

Անհրաժեշտ է ներդնել սնանկության վարույթում գույքի էլեկտրոնային վաճառքի կառուցակարգ՝ համապատասխան իրավակարգավորումներով՝ գույքի վաճառքը սնանկության էլեկտրոնային համակարգի շրջանակներում իրականացնելու համար: Վաճառքի ենթակա գույքերի վերաբերյալ տեղեկությունները պետք է հասանելի լինեն բոլոր մասնակիցների համար և գնային առաջարկ ներկայացնելու գործընթացը լինի թափանցիկ:

Ֆինանսական առողջացմանը նպաստող կայուն մեխանիզմների սահմանում

Պրակտիկայի վերլուծությունը վկայում է ֆինանսական առողջացման ինստիտուտի նվազ արդյունավետության մասին. գործնականում սնանկության գործընթացում գտնվող ընկերությունների մեծամասնություններն անմիջապես անցնում են լուծարման գործընթացի: Սնանկության ոլորտում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ սնանկության վարույթի ընթացքում պարտապանների 10% ցանկացել են ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր և ներկայացրել են, 18% ցանկացել են, սակայն չեն ներկայացրել, 72%՝ չեն ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր: Հատկանշական է, որ այս հարցում պատկերն էական տարբերվում է՝ կախված հարցվողի կարգավիճակից. ֆիզիկական անձանց ավելի բարձր տոկոսը չեն ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր՝ 77.2%, համեմատած իրավաբանական անձանց՝ 63.6%: Միևնույն ժամանակ, իրավաբանական անձանց էապես ավելի բարձր տոկոսն է ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր՝ 16.8%, համեմատած ֆիզիկական անձանց 5.7%⁴⁸:

Այս առումով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ֆինանսական առողջացման գործիքակազմի գրավչությունը բարձրացնելու համար՝ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու, ֆինանսական առողջացման ծրագրերի իրականացումը խթանող գործիքակազմ ներդնելու (օրինակ՝ ֆինանսական առողջացման ծրագրերի հաստատման դեպքում սնանկության կառավարիչների վարձատրության և պարգևավճարների ճկուն մեխանիզմներ), երկրի տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններին համապատասխան ընկերությունների ֆինանսական առողջացմանը պետության օժանդակության ապահովման, առողջացման ծրագրի ձևանմուշների մշակման, սնանկության կառավարիչների, դատավորների և շահագրգիռ անձանց համար համապատասխան դասընթացների կազմակերպման միջոցով:

⁴⁸ Տե՛ս ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն, էջ 80, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://moj.am/storage/uploads/OAM02.pdf>:

Սնանկության վարույթում դատարանի և դատավորների դերակատարման բարձրացում և կարողությունների զարգացում

Չնայած այն հանգամանքին, որ 2019 թվականի հունվարից գործում է մասնագիտացված սնանկության դատարանը, կատարված հետազոտությունների համաձայն՝ սնանկության համակարգում բոլոր կարևոր դերակատարներից ամենաքիչ վստահությունը վայելում էին դատավորները. հարցվածների միայն 32.5% -ն էր կարծում, որ դատավորները ունեն համապատասխան մասնագիտական հմտություններ, իսկ 50%-ից պակասը կարծում էին, որ դատավորները գործը վարել են ողջամիտ, արդար և ըստ սահմանված կարգի⁴⁹:

Այս առումով նախ և առաջ պետք է նշել, որ սնանկության նոր դատարանի ստեղծումը չի ուղեկցվել սնանկության գործեր քննող դատավորների թվի վերանայմամբ և դատարանի ծանրաբեռնվածությունը ազդում է գործի քննության ժամկետների և դատավարության արդյունավետության վրա: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել, որ վերաքննիչ ատյանում էլ սնանկության գործերը քննեն առանձին դատավորներ, որոնք մասնագիտացված են սնանկության ոլորտում, իսկ հետագայում պետք է քննարկել վերաքննիչ սնանկության դատարանի ստեղծման հարցը, քանի որ մասնագիտացված դատարանի կողմից գործերի քննության շղթան վերադաս ատյանների մակարդակով շարունակելը շատ կարևոր է գործերի քննության արդյունավետության և ժամկետների կրճատման տեսանկյունից:

Սնանկության դատարանի արդյունավետության բարձրացման գործում իր դրական ազդեցությունը կունենա նաև էլեկտրոնային սնանկության համակարգի ներդրումը և փաստաթղթաշրջանառության իրականացումը էլեկտրոնային եղանակով:

Անհրաժեշտ է նաև վերանայել դատավորների վերապատրաստման ծրագրերը, իրավական հարցերի վերաբերյալ վերապատրաստումից բացի, իրականացնել սնանկության դատավորների վերապատրաստում նաև ոչ իրավական թեմաներով, ինչպիսիք են՝ տնտեսագիտությունը, բիզնեսը, ֆինանսները, ֆինանսների կառավարումը:

Պետք է քայլեր ձեռնարկել նաև սնանկության դատարանի տեխնիկական կարողությունների զարգացման ուղղությամբ, համալրել դատարանի տեխնիկական միջոցները, բարձրացնել աշխատակազմի տեխնիկական պատրաստվածության մակարդակը: Սա հատկապես կարևորվում է սնանկության էլեկտրոնային համակարգի ներդրման հեռանկարի պայմաններում:

Սնանկության համակարգի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում

⁴⁹ ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն, էջեր 70-73, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://moj.am/storage/uploads/OAM02.pdf>:

Սնանկության ոլորտում կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք սնանկության գործընթացի մասին տեղեկանում են, երբ անձամբ ներգրավվում են սնանկության վարույթում. մասնավորապես, հետազոտության շրջանակներում հարցված պարտապանների շուրջ 70 տոկոսը մինչև սնանկության վարույթում անձամբ ներգրավելը բացարձակ տեղեկացված չի եղել սնանկության գործընթացների վերաբերյալ: Նրանք նաև հակված են վարույթի մասին տեղեկություններ ձեռք բերել ոչ պաշտոնական աղբյուրներից և բանավոր կարգով, ինչը կարող է հանգեցնել շփոթությունների (շատ քչերն են օգտվում էլեկտրոնային ռեսուրսներից) և նրանց միայն 11.3%-ն է սեփական նախաձեռնությամբ ծանոթանում օրենսդրությանը: Գիտելիքի և տեղեկացվածության պակասը նվազեցնում է համակարգի թափանցիկությունը և հաշվետվողականությունը, քանի որ համակարգի մասնակիցները չեն կարողանում գնահատել իրենց գործողությունների համապատասխանությունը օրենսդրությանը կամ գնահատել դրանց արդյունավետությունը:

Այս առումով անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկումներ (գովազդային վահանակների, հեռուստատեսային գովազդների, հեռուստահաղորդումների, մամուլի միջոցով), ֆինանսական կազմակերպությունների կայքերից կատարել հղումներ սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներին (օրինակ՝ էլեկտրոնային սնանկության նոր հարթակին), հատկապես ֆինանսական կազմակերպությունների համար սահմանել պահանջներ՝ իրենց հաճախորդներին վարկային պարտավորություններ ստանձնելու և վճարման պարտականությունները չկատարելու և դրանց արդյունքում սնանկ ճանաչվելու հետևանքների մասին:

Սնանկության վերաբերյալ ունիվերսալ օրենսդրության մշակում

Երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել համակարգային, համապարփակ և ունիվերսալ օրենսդրություն (օրենսգրքի տեսքով) մշակելու ուղղությամբ՝ մեկ միասնական փաստաթղթով կարգավորելու համար սնանկության վարույթին առնչվող բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները:

Սնանկության օրենսգրքի շրջանակներում անհրաժեշտ է, ի թիվս այլնի՝

1. էականորեն փոխել ՀՀ սնանկության մոդելը, առանձնացնելով լուծարման և առողջացման գործընթացները՝ նախատեսել առողջացման կամ լուծարման ծրագիր հենց սկզբից,
2. հստակեցնել սնանկության վարույթի հնարավոր բոլոր կողմերի և մասնակիցների կարգավիճակը,
3. կատարելագործել ֆիզիկական անձանց սնանկության իրավակարգավորումները,
4. կրճատել սնանկության վարույթի ժամկետները,
5. վերանայել կոռուպցիոն ռիսկեր պարունակող բոլոր ներկա կարգավորումները,
6. վերանայել սնանկության վարույթում սնանկության կառավարչի կողմից, պարտապանի սեփականության և բիզնեսի կառավարման հարցերը,
7. նախատեսել սնանկության վարույթում թույլատրելի ծախսերի համակարգ,
8. նախատեսել անդրազգային սնանկության վերաբերյալ իրավակարգավորումներ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում

Արդարադատության արդյունավետության և մատչելիության ապահովման տեսանկյունից կարևորվում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը: Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը կարևոր է նաև ներքին և արտաքին ներդրումների խթանման նպատակով: Հայաստանի ներդրումային գրավչությունը պայմանավորված է նաև առևտրային վեճերի լուծման կանխատեսելիությամբ, որում մեծ դեր ունեն վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները:

Ներկայումս դատարանների գերծանրաբեռնվածության պայմաններում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների կիրառելիության խթանումն ու ընդլայնումը խիստ անհրաժեշտություն է: Ընդ որում՝ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ գործերի մեծ մասը կազմում են որոշակի տեսակի գործեր, որտեղ վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների կիրառությունը կլինի խիստ արդյունավետ: Այսպես՝ 2018թ. գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ 106 618 քաղաքացիական գործերից 75 692 (70.1%) հարուցվել են բանկերի և վարկային կազմակերպությունների, 12 902 (12.1%)՝ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա⁵⁰:

Նշված ոլորտում իրականացվելիք բարեփոխումների շրջանակներում միջազգային լավագույն փորձին, զարգացման համաշխարհային միտումներին և ՀՀ դատաիրավական և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններին համահունչ՝ համապարփակ անդրադարձ պետք է կատարել վեճերի լուծման հայտնի բոլոր ինստիտուտներին, մշակել և ներդնել դրանց կենսագործման կայուն մեխանիզմներ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արբիտրաժային օրենսդրության կատարելագործում

Չնայած այն հանգամանքին, որ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը, հատկապես 2015թ. կատարված փոփոխություններից հետո, համահունչ է ՅՈՒՆՍԻՏՐԱԼԻ «Միջազգային առևտրային արբիտրաժի» մոդելային օրենքի կարգավորումներին, այնուամենայնիվ, առկա են որոշակի իրավական խնդիրներ, որոնց պետք է անդրադարձ կատարել արբիտրաժի արդյունավետության ապահովման տեսանկյունից: Այս առումով օրենսդրական կարգավորմամբ պետք է կատարելագործել արբիտրաժին աջակցություն

⁵⁰ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. տարեկան հաղորդում, էջ 73, հասանելի է հետևյալ հղումով՝ http://court.am/arm/left/annual_report/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4.pdf

ցուցաբերելուն ուղղված կարգավորումները, կատարելագործել արբիտրաժային գործընթացի անկախությունն ու ճկունությունը կարգավորող դրույթները, այդ թվում՝ ընթացակարգի և կիրառվելիք օրենքի ընտրության տեսանկյունից, քննարկել արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման, ճանաչման կամ հարկադիր կատարման դիմումների՝ դատարանի կողմից քննության գործընթացի կոնֆիդենցիալության ապահովման խնդիրը:

Արբիտրաժային կենտրոնների ստեղծման հնարավորությունների ապահովում

Հարկ է նշել, որ Հայաստանում գործում են մի քանի արբիտրաժային հաստատություններ, որոնց կողմից քննվող գործերի մեծ մասը հարուցվում են ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայցերով: Ընդ որում՝ ՀՀ-ում գործող արբիտրաժային հաստատությունները առավելապես գործում են տեղական մակարդակով և միայն բացառիկ դեպքերում կարող են քննել միջազգային բնույթի գործեր: Այս առումով, հաշվի առնելով մի շարք բարենպաստ գործոններ, մասնավորապես՝ անդամակցությունը ԵԱՏՄ կառույցին, հայկական սփյուռքի դերը, պետք է հնարավորություն ստեղծել արբիտրաժային ինստիտուտների ստեղծման ուղղությամբ: Նշված կառույցի կողմից կազմակերպվող արբիտրաժային դատարանները կարող են քննել ինչպես Հայաստանում գործող ընկերությունների միջև ծագող վեճերը, այդպես էլ միջազգային առևտրային վեճերը՝ միջազգային արբիտրների մասնակցությամբ:

Կենտրոնի ստեղծման գործում պետք է հաշվի առնել ինչպես հարաբերականորեն նոր ստեղծված արբիտրաժային կենտրոնների ստեղծման և գործունեության փորձը (Ռուսաստանի արբիտրաժային կենտրոն, Աստանայի և Դուբայի արբիտրաժային կենտրոններ), այնպես էլ ավանդական և միջազգային մեծ հեղինակություն ունեցող կենտրոնների փորձ (Լոնդոնի, Ստոկհոլմի, Յուրիքի կենտրոններ):

Արդյունքում՝ նման նախաձեռնությունը ոչ միայն մեծ խթան է հանդիսանալու Հայաստանում վեճի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը, նպաստելու է Հայաստանի ներդրումային միջավայրի բարելավմանը, բարձրացնելու է Հայաստանի վարկանիշը առնվազն տարածաշրջանային մակարդակով:

Վեճերի լուծման այլընտրանքային այլ միջոցների զարգացում

Վեճերի լուծման այլընտրանքային միջոցների զարգացումն ապահովելու համար չպետք է սահմանափակվել միայն արբիտրաժի զարգացման ուղղություններով և անհրաժեշտ է քննարկել նաև այլ եղանակների, այդ թվում՝ հաշտարարության զարգացման հնարավորությունները: Այս առումով՝

1) անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հաշտարարության իրականացման ժամանակակից գործիքների ներդնման ուղղությամբ (առցանց հաշտարարություն, հեռախոսային հաշտարարություն)՝ դրանց միջոցով սպառողների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև վեճերի լուծումն

իրականացնելու համար: Նման հարթակի միջոցով վեճի լուծումը կարող է իրականացվել բավականին սեղմ ժամկետում՝ սպառողի համար ակնհայտ նվազ ծախսատարությամբ կամ նույնիսկ անվճար՝ հանրային ծառայություններ մատուցող անձի միջոցներով:

2) հաշվի առնելով Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ վեճերի քննության արդյունավետությունը՝ անհրաժեշտ է ընդլայնել Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեության ուղղությունները, վերջինիս վերապահելով նաև իրավաբանական անձանց և ֆինանսական կազմակերպությունների միջև վեճերը քննելու և լուծելու լիազորություններ:

3) անհրաժեշտ է ձեռնարկել հետագա բոլոր քայլերը «Մեդիացիայի արդյունք հանդիսացող՝ վեճերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի ստորագրման⁵¹ և հիման վրա ՀՀ օրենսդրությամբ դրա կիրառման համապատասխան կառուցակարգեր սահմանելու ուղղությամբ՝ համալրելու միջազգային միջնորդության հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական դաշտը և խթանելու միջազգային տնտեսական հարաբերությունների ներդաշնակ զարգացումը:

Միաժամանակ անհրաժեշտ է քննարկել նաև վեճերի լուծման այլ՝ ոչ ավանդական միջոցների ներդնման հարցը (adjudication, case evaluation, early neutral evaluation, ombuds scheme):

Համապատասխան իրավական կրթություն և հանրային իրազեկվածության բարձրացում

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև այդ բնագավառի իրավական կրթության մակարդակի բարձրացումը, կրթական հաստատություններում դրանց վերաբերյալ կրթական ծրագրերի ներդնումը կամ առկա ծրագրերի արդիականացումը՝ շուկայի համար պրոֆեսիոնալ կադրեր ապահովելու նպատակով: Միաժամանակ, անհրաժեշտ է բարձրացնել հանրության իրազեկվածությունը վեճերի լուծման այլընտրանքային եղանակների արդյունավետության վերաբերյալ, իրականացնել հանրային իրազեկումներ (գովազդային վահանակների, հեռուստատեսային գովազդների, հեռուստահաղորդումների, մամուլի միջոցով): Արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ հանրությանը հասանելի՝ վեճերի այլընտրանքային եղանակների մասին համապարփակ տեղեկություններ պարունակող կայքի ստեղծումը՝ համապատասխան հղումներով և, մասնավորապես, հանրային ծառայություններ մատուցող, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կայքերից կատարել հղումներ այդ հարթակին:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

⁵¹ Կառավարությունը 2019թ. մայիսի 30-ի թիվ 678-Ն որոշմամբ հավանություն է տվել «Մեդիացիայի արդյունք հանդիսացող՝ վեճերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի ստորագրման առաջարկությանը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարողական մակագրության ինստիտուտի կիրառման անհրաժեշտ ընթացակարգերի ներդնումը

Կատարողական մակագրության թերթի ինստիտուտի կիրառումը կարող է հանդիսանալ քաղաքացիական գործերով դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու արդյունավետ միջոց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերով առկա գերծանրաբեռնվածությունը պայմանավորված է, առաջին հերթին, գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործերով: Այդուհանդերձ, կատարողական մակագրության թերթի ինստիտուտը դեռևս հնարավոր չէ գործնականում լայնորեն կիրառել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մշակված և ընդունված չէ դրա կիրառման համար անհրաժեշտ գործիքակազմը:

Նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերի վերանայումը

Նոտարական համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է վերանայել նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու ընթացակարգերը, քանի որ օրենքով սահմանված հիմքերը և ընթացակարգերը հստակ չեն:

Նոտարական գործողությունների արդյունավետության բարձրացում

Նոտարական գործողությունների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է նախատեսել, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ նոտարական այն գործողությունները, որոնց անձամբ ներկա են գտնվում կողմերը, կարող են տեսաձայնագրվել: Արդյունքում, ակնկալվում է ապահովել ինչպես նոտարների, այնպես էլ կողմերի շահերի արդյունավետ պաշտպանությունը, նվազեցնել դատական վեճերի հավանականությունը և ապահովել դատական վեճերի դեպքում հավելյալ ապացույցների օգտագործման հնարավորությունը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունն իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորում է անկախության,

ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

Թեպետ դատաիրավական բարեփոխումների նախորդ փուլերում միշտ անդրադարձ է կատարվել փաստաբանական համակարգի բարելավման անհրաժեշտությանը և այդ ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերին, սակայն, հաշվի առնելով այս ոլորտի կարևորությունը մարդու իրավունքների պատշաճ ապահովման և պաշտպանության տեսանկյունից, իրավաբանական որակյալ օգնություն ստանալու իրավունքի ապահովմանն ուղղված կառուցակարգերը կարիք ունեն մշտական ու շարունակական կատարելագործման և զարգացման:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր ծրագրում «Օրենքի առջև բոլորի հավասարությունը, արդարադատությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը» բնագավառի շրջանակներում, կարևորելով արդարադատության որակն ու մատչելիությունը և արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունը, ամրագրել է անվճար իրավաբանական օգնության տրամադրման խրախուսման միջոցների ներդրման, ինչպես նաև, ի թիվս այլ ոլորտների, փաստաբանության զարգացմանը նպաստելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունն ու հանձնառությունը:

Այս ռազմավարական նպատակի շրջանակներում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղված կլինեն ինչպես անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի կառուցակարգերի, այնպես էլ Փաստաբանների պալատի ինստիտուցիոնալ զարգացմանը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնում

«Փաստաբանության մասին» օրենքի ընդունումից ի վեր վերջինս բազմիցս ենթարկվել է բարեփոխումների, այդ թվում՝ աստիճանաբար ընդլայնելով հանրային պաշտպանների կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Թեպետ այս ուղղությամբ կատարված քայլերի արդյունքում արձանագրված առաջընթացին, այդուհանդերձ, դեռևս առկա է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակի ընդլայնման կարիքը: Ուստի, անհրաժեշտ է քննարկել այդ շրջանակում ստորև նշված անձանց ներառելու հարցը, մասնավորապես՝

- օտարերկրացիներին՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար,
- այն անձանց, ում վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ,
- տուժողներին և վկաներին, եթե վերջիններս պարտադիր ժամկետային զինծառայող են կամ երեխա:

Բացի այդ, գործող օրենսդրությունը սահմանափակում է անվճար իրավաբանական օգնության տրամադրումն այն դեպքերում, երբ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձի գույքային (գումարի) պահանջով գործը գերազանցում են նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: Մինչդեռ անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակն ընդլայնելու համատեքստում անհրաժեշտ է վերանայել նաև գույքային պահանջների գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար նախատեսված գումարային սահմանափակման շեմը:

Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնմանը զուգահեռ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել տրամադրվող իրավաբանական, այդ թվում՝ անվճար, օգնության որակի բարձրացման ուղղությամբ: Ընդ որում, այս նպատակը պետք է կրի շարունակական բնույթ և ներառի հանրային պաշտպանների և ընդհանուր առմամբ փաստաբանների մասնագիտական հմտությունների ու կարողությունների հետևողական զարգացումը, վերապատրաստման ընթացակարգերի շարունակական կատարելագործումը, վերապատրաստման ծրագրերի արդիականացումը, վերապատրաստում իրականացնող մասնագետների ընտրության չափանիշների խստացումը և այլն:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային կառուցակարգերի զարգացում

Արդարադատության մատչելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է զարգացնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային մեխանիզմները՝ մասնավորապես pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգեր ներդնելու միջոցով, ինչն իր հերթին կնպաստի հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության թեթևացմանը:

Մասնավորապես, անհրաժեշտ է ստեղծել նոր հարթակ, որը կներառի հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների, փաստաբանական դպրոցի ունկնդիրների, ինչպես նաև փաստաբանական ընկերությունների իրավաբանների, որոնք տարբեր ձևաչափերով կիրականացնեն անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության բարձրացում

Ներկայում հանրային պաշտպանությունն իրականացվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով, որը Փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է: Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ ֆինանսավորման չափերը որոշելու համար հաշվի են առնվում անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած քաղաքացիների հայտերի և փաստացի իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի վիճակագրական տվյալները: Ընդ որում, թեպետ հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների քանակը սահմանում է Փաստաբանների պալատի խորհուրդը, սակայն վերջինս կաշկանդված է պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող ֆինանսավորմամբ:

Հանրային պաշտպանի ինստիտուտի գործունեության ընթացքում արձանագրված հիմնական խնդիրը հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածությունն է, որը պայմանավորված է անընդհատ աճող գործերի թվի համեմատ հանրային պաշտպանների անհամեմատ ցածր թվով, ինչը, օբյեկտիվորեն, չի կարող չանդրադառնալ նաև հանրային պաշտպանների կողմից տրամադրվող ծառայությունների որակի վրա: Այս առումով, հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջնային քայլը հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության թեթևացումն է:

Բացի այդ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման և զարգացման ուղղությամբ:

Փաստաբանական դպրոցի գործունեության զարգացում

Գործող օրենսդրությանը համապատասխան փաստաբանական դպրոցի հիմնական առաքելությունը փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կազմակերպումն և անցկացումն է:

Փաստաբանական դպրոցի գործունեությունն զարգացնելու նպատակով անհրաժեշտ է վերագնահատել փաստաբանական դպրոցի գործունեությունն այն իմաստով, որպեսզի վերջինս ապահովի փաստաբանի գործունեության համար անհրաժեշտ գործնական հմտություններով և կարողություններով զինված փաստաբանների մուտքը փաստաբանական համայնք:

Այս առումով, առաջնային է փաստաբանական դպրոցում մասնագիտական ուսուցման գործընթացի շարունակական կատարելագործումը, ինչպես նաև որակավորման քննություններն անցկացնելու կառուցակարգերի պարզության, օբյեկտիվության ու թափանցիկության ապահովումը: Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը չպետք է վերածվի սոսկ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալուն ուղղված ձևական գործընթացի, այլ պետք է ապահովի փաստաբանի համար գործնական նշանակություն ու կարևորություն ունեցող հմտությունների և ունակությունների դասավանդումը: Իսկ դրա համար անհրաժեշտ է հետևողականորեն և շարունակական հիմունքներով իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում և համապատասխանեցում ժամանակակից պահանջներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին, խստացնել փաստաբանական դպրոցում դասավանդելու նպատակով դասախոսների ընտրությանը ներկայացվող չափանիշները:

Փաստաբանի վարքագծի և բարեվարքության կանոնների կատարելագործում

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանի վարքագծի միասնական կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները, որոնք պարտադիր են բոլոր փաստաբանների համար: Ներկայում գործում է դեռևս 2012 թվականին Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից հաստատված «Փաստաբանների վարքագծի կանոնագիրք»-ը: Այս համատեքստում անհրաժեշտ է ձեռնարկել վարքագծի կանոնների բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացում

Փաստաբանական համակարգի արդյունավետության, ինչպես նաև Փաստաբանների պալատի իրական ինքնակառավարման ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է քննարկել Փաստաբանների պալատի խորհրդի՝ Փաստաբանների պալատի նախագահից ինստիտուցիոնալ առումով անկախ լինելու կառուցակարգերի մշակման և ներդնման անհրաժեշտության հարցը:

Բացի այդ, Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով: Ընդ որում, որակավորման հանձնաժողովի նախագահին ի պաշտոնե Փաստաբանների պալատի նախագահին է: Նման կարգավորման պայմաններում մեծ է հնարավոր շահերի բախման հավանականությունը, որից խուսափելու նպատակով անհրաժեշտ է քննարկել նաև գործող իրավակարգավորումները վերանայելու անհրաժեշտության հարցը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ

Արդարադատության արդյունավետության կարևորագույն բաղադրիչներից է նաև հարկադիր կատարման կայուն համակարգի առկայությունը: Հատկանշական է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի ընդունումից ի վեր Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը կրել է բազմաթիվ ինստիտուցիոնալ փոփոխություններ: Չնայած այն հանգամանքին, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 23 հուլիսի 2019 թվականի ՀՕ-126-Ն օրենքով կատարվեցին բազմաթիվ էական փոփոխություններ, սակայն, այնուամենայնիվ, հարկադիր կատարման ոլորտի օրենսդրությունը համակարգային վերանայման կարիք ունի:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարողական	վարույթների	վերաբերյալ	համապարփակ
իրավակարգավորումների սահմանում			

Գործող օրենքը նախատեսում է հարկադիր կատարման ենթակա մի շարք ակտեր, սակայն օրենքի շրջանակներում հսկատեցված չեն այդ ակտերի հարկադիր կատարման բոլոր առանձնահատկությունները, դրանցից յուրաքանչյուրի հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները առանձին ինստիտուցիոնալ կարգավորման ենթարկված չեն և ոչ միշտ է, որ դատական ակտերի կատարման վերաբերյալ դրույթները կարող են համապարփակ կարգավորել նաև կատարման ենթակա այլ ակտերի կատարման հետ կապված հարաբերությունները: Բացի այդ, գործնականում լինում են դեպքեր, երբ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ստանում է կատարողական թերթեր, որոնք տրվել են ճանաչողական հայցերով, կատարում չենթադրող դատական ակտերի կամ այնպիսի ակտերի հիման վրա, որոնց կատարումը գործնականում խնդրահարույց է, օրինակ՝ սահմանել հարկադիր սերվիտուտ, ճանաչել անձի սեփականությունը գույքի նկատմամբ, հաստատել հաշտության համաձայնություն, որի կատարումը պայմանավորված է պահանջատեր կողմի պարտավորության կատարմամբ և այլն և դրանց կատարումը գործնականում դառնում է անհնար:

Ուստի, ենելով կատարման ենթակա ակտերի տեսակից և բնույթից՝ անհրաժեշտ է սահմանել կատարողական վարույթների և կատարողական գործողությունների կատարման համապարփակ իրավակարգավորումներ՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի բոլոր առանձնահատկությունների հաշվառմամբ:

Կատարողական ծախսերի տարբերակված դրսևորումների ամրագրում

Ներկայում կատարողական գործողությունների կատարման ծախսերը գանձվում են՝ ելնելով բռնագանձվող գումարի կամ գույքի արժեքի չափից: Այնինչ նման կառուցակարգի պայմաններում առաջանում են իրավիճակներ, երբ բռնագանձման ենթակա կատարողական ծախսը ակնհայտորեն գերազանցում է հարկադիր կատարողի կատարած գործողությունների ծավալը և բարդությունը, և հակառակը՝ կատարված մեծածավալ աշխատանքի դիմաց վճարվում է ակնհայտորեն նվազ կատարողական ծախս՝ ելնելով բռնագանձվող գումարից:

Ուստի անհրաժեշտ է սահմանել մեխանիզմներ, որ բռնագանձման ենթակա կատարողական ծախսերի չափի որոշումը չսահմանափակվի միայն գույքի արժեքի կամ բռնագանձվող գումարի չափով, այլ կատարողական ծախսերի հաշվարկը կատարվի՝ ելնելով նաև կատարողական գործողությունների կատարման ծավալից և առանձնահատկություններից:

Կատարողական վարույթների կասեցման հիմքերի և կարգի վերանայում:

Անհրաժեշտ է վերանայել կատարողական վարույթի կասեցման հիմքերին և կարգին վերաբերող իրավակարգավորումները՝ ապահովելով այդ հիմքերի միասնականությունը և բացառելով հարկադիր կատարողի հայեցողությամբ վարույթը կասեցնելու հնարավորությունը՝ սահմանելով դրանք որպես հարկադիր կատարողի կողմից իրականացվող ընդհանուր լիազորություններ:

Կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի կիրառման եղանակների ընդլայնում

Կատարողական գործողությունների կատարման ժամկետների կրճատման և ընդհանրապես կատարողական վարույթի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է ժամանակակից տեխնիկական լուծումների կիրառումը: Մասնավորապես անհրաժեշտ է կատարելագործել էլեկտրոնային ծանուցումների մեխանիզմները՝ ընդլայնելով բջջային ծանուցումների և հաղորդագրությունների միջոցով

ծանուցումների իրականացման և որոշումների հանձնման եղանակները, որը ներկայումս կիրառվում է սահմանափակ դեպքերում: Բացի այդ, վարչարարության արդյունավետությունն ապահովելու համար պետք է զարգացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական բոլոր մարմինների և շահագրգիռ անձանց միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, ընդլայնել կատարողական վարույթի մասնակիցների հնարավորությունը՝ հարկադիր կատարողի հետ հաղորդակցությունն էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար՝ որոշումների էլեկտրոնային եղանակով բողոքարկում, դիմումների ներկայացում, պատասխանների ստացում: Բացի այդ, դրամական պահանջներով կատարողական թերթերի կատարման շրջանակներում բռնագանձման ենթակա գումարների հաշվարկման ճշգրտությունն ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել դրամական պարտավորության նկատմամբ հաշվարկվող բոլոր տոկոսների և այլ վճարների ավտոմատ հաշվարկման էլեկտրոնային գործիքներ՝ դրանով իսկ բացառելով պահանջատիրոջ (մասնավորապես բանկի և այլ ֆինանսական կազմակերպության) կողմից ներկայացվող հաշվարկների հիման վրա;

Անհրաժեշտ է նաև վերազինել հարկադիր էլեկտրոնային աճուրդների համակարգը, կատարելագործել աճուրդների իրականացման տեխնիկական (ծրագրային) հագեցվածությունը:

Կատարողական վարույթի ժամկետների կրճատում

Անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևորվում է նաև սեղմ ժամկետներում կատարողական վարույթի իրականացումն ապահովելը: Այս առումով անհրաժեշտ է վերանայել կատարողական բոլոր գործողությունների կատարման ժամկետները, հատկապես շեշտը դնելով կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձված գումարները սեղմ ժամկետներում պահանջատիրոջը փոխանցելու գործիքակազմի ներդրումը:

ԲԱԺԻՆ II: ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի լիարժեք և արդյունավետ իրագործման ապահովման նպատակով կազմավորվում է 15 անդամներից բաղկացած Համակարգող Խորհուրդ (Խորհուրդ): Խորհուրդը Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքի համակարգմանը, մշտադիտարկմանը և գնահատմանն աջակցելու գործառույթներ իրականացնող մշտապես գործող բազմաշահառու խորհրդատվական մարմին է:

2. Խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչը, ՀՀ արդարադատության նախարարը (Խորհրդի նախագահ), Արդարադատության նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը (համաձայնությամբ), Բարձրագույն դատական խորհրդի անդամը (համաձայնությամբ), Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալը (համաձայնությամբ), Ազգային Ժողովի պետական և իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամը (համաձայնությամբ), Արդարադատության ակադեմիայի ռեկտորը (համաձայնությամբ), Փաստաբանների պալատի ներկայացուցիչը (համաձայնությամբ), ՀՀ-ում առավել մեծ թվով ուսանողներ ունեցող երկու իրավագիտության ֆակուլտետները ներկայացնող մեկական ներկայացուցիչ՝ պրոֆեսորադասախոսական կազմից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից 2 ներկայացուցիչներ:

3. Խորհրդի անհատական կազմի ձևավորումն ապահովվում է արդարադատության նախարարության միջոցով, իսկ անհատական կազմը հաստատվում է Վարչապետի կողմից: Խորհրդի կազմում ընդգրկվելու համար թեկնածությունները ներկայացվում են այն հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությանը կամ դատական համակարգի հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն: Թեկնածուների կենսագրությունները և նրանց ներկայացրած հասարակական կազմակերպությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները հրապարակվում են արդարադատության նախարարության կայքում: Խորհրդի կազմում ընդգրկվելու համար դիմում ներկայացնելու կարգը դիմում ներկայացնելու վերջնաժամկետից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է արդարադատության նախարարության կայքում:

4. Խորհուրդը համարվում է ձևավորված իր անդամների կեսից ավելին նշանակվելու դեպքում: Խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի

նիստն իրավագոր է Խորհրդի անդամների կեսից ավելին ներկա լինելու դեպքում, իսկ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան սահմանված չէ Խորհրդի աշխատակարգով:

5. Խորհուրդն ընդունում է իր աշխատակարգը՝ կազմավորվելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

6. Խորհրդի անդամներին վարչական, փորձագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման նպատակով ստեղծվում է Խորհրդի քարտուղարություն, որն արդարադատության նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է:

7. Խորհուրդը կարող է ձևավորել աշխատանքային խմբեր, որոնք պատասխանատու կլինեն Ռազմավարությամբ սահմանված առանձին ռազմավարական նպատակներից բխող գործողությունների իրականացման համակարգման համար:

8. Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի իրականացման համակարգումը և մշտադիտարկումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի քարտուղարություն են ներկայացնում Գործողությունների ծրագրերով իրենց վերապահված գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: Խորհրդի քարտուղարությունը 2 ախատանքային օրվա ընթացքում հաշվետվությունների փաթեթը ներկայացնում է Խորհրդին ու տեղադրում արդարադատության նախարարության պաշտոնական կայքի հատուկ բաժնում:

9. Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի ընթացքի մշտադիտարկման և գնահատման գործառույթներն իրականացնում է արդարադատության նախարարությունը՝ դրա համար պատասխանատու նշանակված կառուցվածքային ստորաբաժանման միջոցով, որը յուրաքանչյուր տարվա վերջում մշտադիտարկման ու գնահատման վերաբերյալ զեկույցը ներկայացնում է Խորհրդին: Մշտադիտարկման և գնահատման մեթոդոլոգիական ուղեցույցը հաստատում է Խորհուրդը:

10. Խորհուրդը Ռազմավարության և Գործողությունների ծրագրերի իրականացման արդյունավետության զեկույցների քննարկման արդյունքում կարող է առաջարկություններ ներկայացնել Կառավարությանը Ռազմավարության և Գործողությունների ծրագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

11. Հավանության արժանանալու դեպքում առաջարկվող փոփոխությունների իրականացման աշխատանքները համակարգվում է արդարադատության նախարարության կողմից՝ որպես դատաիրավական ոլորտում կառավարության քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմին:

12. Ռազմավարության ու Գործողությունների ծրագրերի ազդեցության գնահատման նպատակով Խորհուրդը միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց անցկացման հիման վրա չափվում է բարեփոխումների ազդեցությունը հասարակության վրա: Միջնաժամկետ

փուլում իրականացված հարցումների արդյունքների գնահատման ու վերլուծության արդյունքում Խորհուրդը կարող է նախաձեռնել Ռազմավարության ու Գործողությունների ծրագրերի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման ու փոփոխությունների նոր շրջափուլ:

13. Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով Ռազմավարությունը և Գործողությունների ծրագրերը տեղադրվում են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջի հատուկ բաժնում: Կայք էջում տեղադրվում են նաև կիսամյակային հաշվետվությունները և տարեկան զեկույցները:

14. Խորհուրդը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կառավարություն է ներկայացնում իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն, իսկ տարեվերջին՝ տարեկան ամփոփ զեկույց:

15. Խորհուրդը օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կարող է նախաձեռնել Ռազմավարության առանձին նպատակների իրագործման համար պատասխանատու մարմինների հաշվետվողականության լրացուցիչ գործընթացներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

